«ԼՈԵՑՎԱԾ ԶԱՅՆԵՐ».

Կնասպանությունը Հայաստանում 2016-2017 կեկույց

Open Society Foundations - Armenia
Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա
Coalition to stop violence against women

Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Երևան 2018

Զեկույցի հեղինակներ՝

Աննա Հովհաննիսյան
Սոցիալական քաղաքականության հետազոտող
Ստելլա Չանդիրյան
Եվրոպական և միջազգային համեմատական իրավունքի մասնագետ

Խմբագիր՝ **Աննա Շահնազարյան**
Գրքի ձևավորում՝ **Լուսինե Թալալյան**
Սրբագրիչ՝ **Ալետա Հակոբյան**

Զեկույցում ներկայացված է կնասպանության՝ իբրև հղացքի ուսումնասիրությունն ու ՀՀ-ում 2016-2017 թթ. կնասպանության դեպքերի վերլուծությունը:

Սույն փաստաթղթի նպատակն է պետական համակարգին և լայն հանրությանը ծանոթացնել կնասպանություն երևույթին, պատճառներին, ինչպես նաև ներկայացնել կնասպանության և ընտանեկան բռնության միջև առկա կապը: Զեկույցի շրջանակներում անդրադարձ կկատարվի 2016-2017 թթ. սպանված կանանց պատմություններին՝ ներկայացնելով կնասպանության գործերով դատական ակտերը, ինչպես նաև վեր կհանվեն օրենսդրական և իրավակիրառ համակարգում առկա իրավական բացերը:

Զեկույցից որևէ հատված օգտագործելու և մեջբերելու պարագայում համապատասխան հղում կատարելը պարտադիր է:

«Կնասպանությունը ես համեմատում եմ ցեղասպանության հետ՝ հաշվի առնելով այն կոնտեքստը, որ սա մի ամբողջ խմբի, բնակչության մի ամբողջ խավի նկատմամբ գործողություն է, որը արմատացած է այդ խավի անարժեք, ստորադաս լինելու համոզմունքի վրա, և հետևաբար, դա անելը նաև թույլատրելի է»:

Աննա Շահնազարյան
Ֆեմինիստ և ակտիվիստ

Զեկույցը պատրաստվել է «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի կողմից «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստանի» ֆինանսական աջակցությամբ:

Զեկույցը նվիրվում է կնասպանության զոհ դարձած կանանց, որոնք ողբերգական հանգամանքներում սպանվել են իրենց զուգընկերների, ընտանիքի անդամների և այլ անձանց կողմից:

Բովանդակություն

Ներածություն 8

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը 11

Կնասպանության եզրույթը և դրա կիրառման

շրջանակը 17

Ընտանեկան բռնության և կնասպանության միջև առկա կապը 25

Զեկույցում ներառված կնասպանության դեպքերի ուսումնասիրության շրջանակը 31

Զեկույցում ներառված կնասպանության դեպքերի ներկայացման մեթոդաբանությունն ու համառոտ նկարագրությունը 39

Քրեական գործերի դատաքննությունն ավարտված և դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով կնասպանության դեպքեր **41**

Դեռևս չավարտված քրեական գործերով կնասպանության դեպքեր **51**

Անմեղսունակության վիճակում կատարված կնասպանության դեպքեր **53**

Եզրակացություն 58

Որակական հետազոտության արդյունքում բացահայտ-
ված տվյալներ 63

Առաջարկներ 70

Հասկացությունների բառարան 72

Գրականության ցանկ 75

«Լռեցված ձայներ».

կնասպանությունը Հայաստանում

2016-2017 թթ. վեկույց

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների և հանրային առողջապահության ոլորտների կիզակետում հայտնված խնդիր է: Կանանց նկատմամբ բռնության ծայրահեղ դրսևորումներից է կնասպանությունը, որի տարածվածությունն ամբողջ աշխարհում տագնապալի թվերի է հասնում: Համաձայն Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ կանանց սպանությունների 35%-ն իրագործվում է ներկայիս կամ նախկին զուգընկերոջ կողմից: Սակայն այդ նույն աղբյուրը նշում է, որ այս վիճակագրությունն ամբողջական չէ[1]: Կնասպանությունը՝ որպես կանանց նկատմամբ խտրականության դրսևորում, դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չէ, ինչը պայմանավորված է նախ և առաջ վստահելի և համապարփակ վիճակագրական տվյալների բացակայությամբ, ինչպես նաև տարբեր պետությունների կողմից կանանց սպանությունների՝ որպես կնասպանության որակման միասնական մոտեցման բացակայությամբ:

Համաձայն ոչ պաշտոնական վիճակագրության՝ ամբողջ աշխարհում գենդերային հիմքով սպանություններից ավելի շատ կին է մահանում, քան քաղցկեղից, պատերազմներից կամ որևէ ինֆեկցիոն հիվանդությունից[2]: Համաձայն ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի «Սպանությունների գլոբալ ուսումնասիրության»՝ կանայք, շատ ավելի հավանական է, որ կսպանվեն իրենց ներկայիս կամ նախկին զուգընկերների և ընտանիքի անդամների կողմից, քան տղամարդիկ[3]:

Կնասպանությունն այն հանցագործությունն է, որը հայրիշխանական համակարգի կողմից ապաքաղաքականացվում է և մեկնաբանվում որպես «խենթ անձանց կողմից» իրականացվող հանցագործություն, ինչի հետևանքով էլ շատ հանցագործներ չեն ստանում այդ հանցանքի դիմաց համաչափ պատիժ: Արդարացնելով այս սպանությունները՝ համակարգը հետապնդում է ինքնապահպանման միտում:

---

1. Տե՛ս Ըմբռնել ու լուծել կանանց նկատմամբ բռնության խնդիրը, ԱՀԿ, 2012 թ., հասանելի է http://apps.who.int/iris/bitstream/handle/10665/77421/WHO_RHR_12.38_eng.pdf;jsessionid=7E6EFECBD717D4371CE9D0E3EA3B05A6?sequence=1 հղումով:

2. Տե՛ս Կնասպանություն. գլոբալ խնդիր, որ գործել է պահանջում, 2013 թ., էջ 16, ՄԱԿ-ի համակարգերի ակադեմիական խորհուրդ (ACUNS) Վիեննայի գրասենյակ, հասանելի է http://www.genevadeclaration.org/fileadmin/docs/Co-publications/Femicide_A%20Gobal%20Issue%20that%20demands%20Action.pdf հղումով:

3. Տե՛ս Սպանությունների գլոբալ մատյան, UNODC, 2013 թ., էջ 13-14, հասանելի է https://www.unodc.org/documents/data-and-analysis/statistics/GSH2013/2014_GLOBAL_HOMICIDE_BOOK_web.pdf հղումով:

Կնասպանության արմատական պատճառների վերացմանը հասնելու համար կարևոր է հաշվի առնել, որ կնասպանությունը քաղաքական հանցագործություն է, որը պահանջում է համընդհանուր ճանաչում և համակարգային արձագանք: Շատ կարևոր է անդրադառնալ դրա իրական արմատներին և մեկնարկել այն համոզումից, որ կնասպանությունն ուժի և իշխանության դրսևորման ծայրահեղ արտահայտումն է կնոջ կյանքի և մարմնի վրա:

Այս զեկույցը թվով երկրորդն է, որ անդրադառնում է կնասպանության հիմնախնդրին Հայաստանում: 2016 թ. «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի ջանքերով մշակվեց Հայաստանում կնասպանության վերաբերյալ առաջին զեկույցը, որն անդրադարձավ 2010-15 թթ. կանանց սպանություններին ներկայիս կամ նախկին զուգընկերների կողմից: Սույն զեկույցն անդրադառնում է 2016-17 թթ. կնասպանության դեպքերին, մասնավորապես՝ գործերի դատավարությանը և արդարադատության հասանելիությանը, ինչպես նաև՝ կնասպանության երևույթի համակարգային և խորն արմատացած պատճառներին:

Զեկույցը բաղկացած է 4 հիմնական հատվածներից: Առաջին մասում անդրադարձ է կատարվում զեկույցի մշակման մեթոդական և մեթոդաբանական հիմքերին, մասնավորապես՝ հետազոտության նպատակին, խնդիրներին և տեղեկատվության հիմնական աղբյուրներին: Երկրորդ հատվածում դիտարկվում են կնասպանության երևույթի հայեցակարգային խնդիրներն և ընդգրկման տիրույթները: Այս գլխի շրջանակներում ուսումնասիրվում են նաև կնասպանության արմատական պատճառները, տեսակները և տարբեր դրսևորումները: Զեկույցի երրորդ հատվածում ներկայացվում են 2016-2017 թթ. ՀՀ-ում տեղի ունեցած կնասպանության դեպքերը: Դրանց վերլուծության միջոցով բարձրաձայնվում են այն կանանց պատմությունները, որոնք զրկվեցին սեփական կյանքից ուժի և իշխանության անհավասարության, արմատացած կարծրատիպերի և համընդհանուր թողտվության պատճառով: Յուրաքանչյուր պատմության շրջանակներում ներկայացվում է դատահիրավական համակարգի արձագանքը հանցագործությանը: Զեկույցը ամփոփվում է առաջարկներով, որոնք կօգնեն քաղաքականություն մշակողներին և լայն հանրությանն առավել հասցեական և թիրախային քայլերի միջոցով ազդեցություն ունենալ կնասպանության պատճառների վրա:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Կնասպանության դեպքերն ուսումնասիրելիս առանձնացնում են հետևյալ մոտեցումները[1]՝

- Ֆեմինիստական մոտեցում, որն ուսումնասիրում է կանանց սպանության դեպքերը՝ միևնույն ժամանակ հակադրվելով հայրիշխանական կեղեքմանը:
- Սոցիոլոգիական մոտեցում, որի կիզակետում կանանց սպանությունների հատուկ առանձնահատկությունների ուսումնասիրությունն է, որոնք կնասպանությունը դարձնում են առանձին երևույթ:
- Քրեաբանական մոտեցում, որն անդրադառնում է կնասպանությանը՝ որպես հանցագործության մի տարատեսակի:
- Մարդու իրավունքների մոտեցումը դիտարկում է կնասպանության ավելի լայն շրջանակը՝ համարելով այն կանանց նկատմամբ բռնության առավել ծայրահեղ դրսևորում:
- Ապագաղութային մոտեցումն ուսումնասիրում է կնասպանության դեպքերը գաղութային տիրապետության համատեքստում՝ ներառյալ «պատվի համար» սպանությունները:

Այս զեկույցի շրջանակներում կնասպանության դեպքերը, դրանց պատճառահետևանքային կապը գենդերային բռնության հետ կուսումնասիրվեն ֆեմինիստական և մարդու իրավունքների մոտեցումներով: Ֆեմինիստական մոտեցման հիմնական գաղափարը հայրիշխանական համակարգի կողմից կիրառվող իշխանության վերլուծությունն է: Հայրիշխանության հիմնարար սկզբունքն է ուժն ու իշխանությունը, ընդ որում կանանց և տղամարդկանց միջև այդ ուժերը բաշխված են անհավասարաչափ, որտեղ

1. Կնասպանության տեսություններն ու դրանց նշանակությունը հասարակական հետազոտություններում, 2016 թ., էջ 5, հասանելի է https://www.violenceresearchinitiative.org/uploads/1/5/6/9/15692298/theories_femicide.pdf հղումով:

տղամարդիկ ունեն իշխանություն և բռնանում են կանանց նկատմամբ սեփական վերահսկողությունը պահպանելու համար[2]:

Ու չնայած կնասպանության արմատական պատճառները վաղուց արդեն բացահայտված են և ներկայացված տարբեր հետազոտությունների շրջանակներում, այնուամենայնիվ, հանցագործության իրականացման, կնասպանության ճանաչման, արձագանքման, մեկնաբանման և հանցագործությունը կատարած անձանց պատժի ձևերն ամեն երկրում ունեն որոշակի տարբերություններ: Վերջիններիս բացահայտման նպատակով էլ նախաձեռնվել է սույն հետազոտության իրականացումը:

Առհասարակ կնասպանության դրսևորումները ՀՀ-ում համարվում են քիչ ուսումնասիրված: Նախադեպային ուսումնասիրություն անցկացրել է միայն «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան 2016 թ., որն իր բնույթով առավելապես հետախուզական էր և նպատակ ուներ ներկայացնել սպանված կանանց պատմությունները:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է Հայաստանում կնասպանության երևույթի առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությամբ, մասնավորապես՝ կարևոր է բացահայտել, թե արդյոք կանանց սպանություններն իրականացվում են ընտանիքի ներսում, թե այլ անձանց կողմից, հասկանալ ընտանեկան բռնության և կնասպանության դեպքերի միջև առկա պատճառահետևանքային կապը, բացահայտել ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրական կարգավորումները և բացերը, ինչպես նաև հանրայնացնել 2016 և 2017 թթ. կնասպանության դեպքերը:

Հատկանշական է, որ պետական կառույցները, որոնք զբաղվում են կնասպանության դեպքերի հետաքննությամբ և դատավարությամբ առհասարակ, չեն որակում կանանց սպանությունները ընտանիքում կամ ընտանիքից դուրս որպես կնասպանություն, չեն դիտարկում դրա արմատական պատճառները և չունեն մեկ միասնական տեղեկատվական բազա, որը հիմք կծառայի հետազոտության համար: **Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև պետության կողմից կնասպանության դեպքերի մասին համապարփակ տեղեկատվության և վիճակագրության վարման բացը մատնացույց անելու, այս դեպքերի կանխարգելման, հետաքննության և արդար դատավարության ապահովման անհրաժեշտությունը բարձրաձայնելու նկատառումներով:**

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Հայաստանում 2016 և 2017 թթ. արձանագրված կնասպանության դեպքերի առանձ-

2. Նույն տեղում, էջ 5-6:

նահատկությունները, մասնավորապես՝ դուրս բերել կնասպանությանը նախորդող և հաջորդող մահաբեր գործոնները, բացահայտել դեպքերի ընդհանրությունները և կապը ընտանեկան բռնության երևույթի հետ:

Հետազոտության արդյունքում բացահայտված փաստերը և դրանց հիման վրա մշակված առաջարկները կներկայացվեն պետական կառույցներին և լայն հանրությանը: Առաջարկների հետևողական իրագործումը կնպաստի ՀՀ-ում կնասպանության դեպքերի կանխարգելմանը:

Հաշվի առնելով պետության կողմից կնասպանության դեպքերի վիճակագրության վարման բացակայությունը՝ հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են 2016 և 2017 թթ. կանանց սպանության բոլոր դեպքերը, որոնք այնուհետև ֆիլտրվել են՝ ըստ որոշակի չափորոշիչների՝ դասակարգվելով որպես կնասպանություն:

Այդ չափորոշիչները ներառում են՝

- Սպանվածի նկատմամբ հայրիշխանական ընկալումների ակնհայտ դրսևորումը՝ պայմանավորված հայրիշխանական համակարգի կողմից ուժի և իշխանության հաստատման հանգամանքներով,
- Սպանվածի կողմից ընտանեկան բռնության ենթարկվելու (շարունակական) բնույթը:

Հետազոտության խնդիրներն են.

1. Բացահայտել կնասպանության դեպքերի ընդհանրական բնութագրիչները և ներկայացնել դրանք քանակական տվյալների տեսքով (տարիք, բնակավայր, ամուսնական կարգավիճակ, մեղադրյալի հետ ազգակցական կապը, սպանության իրականացման հանգամանքները, պատժի նշանակումը, մեղմացնող հանգամանքները և այլ բնութագրիչներ):

2. Բացահայտել կնասպանության դեպքերի առանձնահատկությունները, մասնավորապես՝ մահաբեր գործոնները, որոնք նախորդել են սպանությանը, այդ թվում՝ ընտանեկան բռնության ու գենդերային հիմնախնդիրների և կնասպանության միջև կապը ՀՀ-ում:

3. Պարզել, թե ՀՀ-ում կնասպանության դեպքերի բացահայտման և կանխարգելման գործընթացներում արձագանքման ինչպիսի մեխանիզմներ և մոտեցումներ են գործում:

4. Մշակել առաջարկներ՝ հիմնված բացահայտված փաստերի վրա, որոնք կնպաստեն կնասպանության կանխարգելմանը, կնասպանության դեպքերի արդար դատավարությանը:

Հետազոտության վարկածները.

1. Հայաստանում պետական մակարդակով չկան կնասպանության երևույթի կանխարգելման և արձագանքման մեխանիզմներ:

2. ՀՀ-ում կնասպանության հիմնական դեպքերը տեղի են ունենում ընտանիքի ներսում ուժերի անհավասար բաշխման և իշխանության բանեցման հետևանքով:

Տեղեկատվության ստացման մեթոդները

Հետազոտության նպատակից և խնդիրներից ելնելով, ինչպես նաև ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ ավելի ամբողջական տեղեկատվություն ստանալու համար նպատակահարմար ենք գտել իրականացնել սոցիոլոգիական հետազոտություն հետևյալ սոցիոլոգիական մեթոդների կիրառմամբ՝ փաստաթղթերի բովանդակային վերլուծություն, որի շնորհիվ փորձել ենք պարզել կնասպանության դեպքերի բնութագրիչները: Բացահայտված տվյալները հնարավորություն են տվել վերլուծել և դուրս բերել կնասպանության դեպքերի ընդհանրական առանձնահատկությունները:

Դեպքերի վերլուծության մեթոդաբանությունն առանձին ենթաբաժնով կներկայացվի դեպքերին վերաբերող հատվածում:

Այս տվյալների հիման վրա իրականացվել է առավել խորքային վերլուծություն՝ բացահայտելու կնասպանության դեպքերի և գենդերային հիմնախընդիրների ու մասնավորապես՝ ընտանեկան բռնության միջև կապը: Վերլուծել ենք նաև պատժի իրականացման համաչափությունը և ներպետական օրենսդրությունն այդ դեպքերի արդար դատավարության ապահովման տեսանկյունից:

Ընտրանքի հիմնավորումը

Դեպքերին ծանոթանալու նպատակով «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան գրություն է ուղարկել ՀՀ դատական դեպարտամենտ: Դատական դեպարտամենտի կողմից տրամադրվել են ընդհանուր թվով 120 սպանության դատական գործեր:

Դատական դեպարտամենտի տրամադրած՝ 2016 և 2017 թթ. սպանությունների 120 դատական գործերն են դարձել հետազոտության առարկան:

Հետազոտության սահմանափակումները և բարդությունները

Հետազոտության հիմնական սահմանափակումները պայմանավորված են պետական կառույցներում մեկ միասնական տեղեկատվական բազայի բացակայությամբ, որով կանանց սպանության դեպքերի կենտրոնացած հաշվառում կվարվեր: Բացի այդ՝ պետական մակարդակով կնասպանության երևույթի ճանաչման բացակայության, ընտանեկան բռնության դեպքերի խիստ քողարկվածության պատճառով հնարավոր է դեպքերի որոշակի թվաքանակի կորուստ, քանի որ իրականում կնասպանության դրսևորում հանդիսացող դեպքերը համապատասխանաբար չեն գրանցվել, ուստի դրանց վերլուծությունը նույնպես տեղ չի գտել այս զեկույցում:

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵԶՐՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Կնասպանությունը համեմատաբար նոր եզրույթ է, որը բնութագրում է կնատյացության հիմքով կանանց սպանության դեպքերը, սակայն երևույթը, որն այն բնութագրում է, այնքան հին է, որքան ինքնին հայրիշխանությունը[3]:

16-րդ և 17-րդ դարերում «վհուկասպանությունը» եվրոպական շատ երկրներում իրականացվում էր տղամարդկանց կողմից որպես հասարակության մեջ սեփական գերիշխանությունը պահպանելու միջոց: Վհուկասպանության» զոհերի 90%-ը կանայք էին: Այդ շրջանում եվրոպական շատ քաղաքներում տղամարդիկ այրում կամ սպանում էին այն կանանց, որոնք իրենց արտաքինով կամ վարքով տարբերվում էին տվյալ հասարակական խմբի ներսում առկա պատկերացումներից[4]:

Կնասպանության հայեցակարգը տեսական մակարդակում սկսեց շրջանառվել 1970-ականներին, երբ «կնասպանություն» եզրույթն առաջարկվեց որպես այլընտրանք գենդերային տեսանկյունից ավելի չեզոք «մարդասպանություն» (անգլ. homicide) եզրին: Նման եզրույթի շրջանառությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ մարդասպանության սահմանումը չէր արտահայտում խտրական, ճնշող, անհավասար և համակարգային բռնությունը կանանց նկատմամբ:

Դայանա Ռասելը և Ջեյն Կապուտին 1990 թ. սահմանեցին եզրույթը որպես «…տղամարդկանց կողմից կանանց սպանություն, որի շարժառիթն է ատելությունը, արհամարհանքը, հաճույքը կամ կնոջ նկատմամբ սեփականատիրական նկրտումները»[5]:

Հատկանշական է, որ Քերընն Սթաուութի հոդվածի տպագրումից հետո միայն

---

3. Տե՛ս Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականությունը, Մակմիլան հրատարակչություն, 2012 թ., էջ 25:

4. Տե՛ս Մերիէն Հեսթեր, Վհուկամոլությունը որպես կանանց սոցիալական վերահսկողություն 16-րդ և 17-րդ դարերում Անգլիայում, Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականություն, Մակմիլան հրատարակչություն, 2012 թ., էջ 27-36:

5. Տե՛ս Կապուտի Ջ., Ռասել Դ., Կնասպանություն. խոսելով անխոսելին, էջ 34–37, Ms. 1990;1(2)

եզրույթը սկսեց ավելի ակտիվորեն շրջանառվել ակադեմիական գրականության մեջ: 1992 թ. տպագրված այդ հոդվածը ֆեմինիստական գաղափարախոսության տեսանկյունից վեր էր լուծում կնասպանությունը ԱՄՆ-ում[6]: Այդ աշխատությունից հետո կնասպանության պատճառների ուսումնասիրության նպատակով սկսեցին իրականացվել կնասպանության նկարագրությանը և կանանց բռնի սպանությունների ֆենոմենին անդրադարձող հետազոտություններ:

1992 թ. Դայանա Ռասելը և Ջիլ Ռեդֆորդն առաջարկեցին մեկ այլ սահմանում, մասնավորապես՝ «…ատելության հիմքով կնոջ սպանությունը տղամարդու կողմից»[7]:

2001 թ. Դայանա Ռասելն ու Ռոբերտա Հարնսը սահմանումն ընդլայնեցին իբրև՝ «կանանց սպանություն տղամարդկանց կողմից նրանց կին լինելու պատճառով», որպեսզի ներառեն սեքսիզմի հիմքով բոլոր սպանությունները և ոչ միայն ատելության հիմքով սպանությունները[8]:

Տեսաբանների մի խումբ (Դայանա Ռասել, Գլենդեն Լեմարդ) կնասպանության դեպքերին են դասում նաև կանանց ծննդաբերության, չպաշտպանված հղիության արհեստական ընդհատումների արդյունքում տեղի ունեցած մահացության դեպքերը[9], քանի որ հայրիշխանական համակարգը չի արժևորում կնոջ կյանքն այնպես, ինչպես կարժևորեր տղամարդու կյանքը և ըստ այդմ՝ չի ստեղծում համապատասխան պայմաններ կամ ստեղծում է լրացուցիչ խոչընդոտներ, որոնք ազդում են կնոջ առողջության և կյանքի վրա:

2013 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ընդունեց №68/191 բանաձևը, որը վերաբերում է կանանց սպանություններին, այդ թվում՝ ներկայիս և նախկին զուգընկերների կողմից: Բանաձևում օգտագործվում է կանանց գենդերային սպանություններ եզրույթը, սակայն նշվում է, որ ընդունելի անվանում է համարվում նաև կնասպանությունը, որն այսօր կիրառվում է որոշ երկրների օրենսդրությունում[10]:

---

6. Տե՛ս Քերընն Սթաուութ, Մտերիմների կնասպանություն. էկոլոգիական վերլուծություն, Սոցիոլոգիայի և սոցիալական բարեկեցության ամսագիր, համար 19, թողարկում 2, 1992 թ., հասանելի է https://scholarworks.wmich.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=2029&context=jssw հղումով:

7. Տե՛ս Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականությունը, Մակմիլան հրատարակչություն, 2012 թ., էջ 3:

8. Տե՛ս Ռասել Դ. Ե. Հ., ՁԻԱՀ-ը որպես զանգվածային կնասպանություն. Հարավային Աֆրիկան՝ կիզակետում, Կնասպանությունը գլոբալ հեռանկարում, Նյու Յորք, Teacher's College Press, 2001 թ., էջ 100-114:

9. Տե՛ս Կնասպանության ընկալման ամրապնդում: Կիրառելով հետազոտությունը խթանելու գործողությունները և հաշվետվողականությունը, Վաշինգտոն, էջ 29, հասանելի է https://path.azureedge.net/media/documents/GVR_femicide_rpt.pdf հղումով:

10. Տե՛ս Կանանց և աղջիկների գենդերային հիմքով սպանությունների դեմ գործողությունների իրականացման մասին բանաձև, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 2014 թ., հասանելի է https://www.unodc.org/documents/commissions/CCPCJ/Crime_Resolutions/2010-2019/2013/General_Assembly/A-RES-68-191.pdf հղումով:

Այսպիսով՝ սպանությունը կնասպանություն որակելու համար պետք է լինի հստակ կապ սպանվածի գենդերի, այդ գենդերից բխող դերերի, կարգավիճակի և հասարակությունում առկա կարծրատիպերի ու սպանության միջև:

Կնասպանության երևույթը դիտարկելիս կարևոր է անդրադառնալ նաև ինքնասպանության այն դեպքերին, որոնք պայմանավորված են եղել կնոջ՝ դեպքին նախորդած տառապանքների և խոշտանգումների արդյունքում առաջացած հուզական վիճակով[11]: Այս տեսանկյունից կարևոր է հասկանալ, թե գենդերային հիմնախնդիրները, արմատացած կարծրատիպերը և խտրականությունը ինչպիսի ազդեցություն են ունեցել կնոջ՝ ինքնասպանություն գործելու որոշումը կայացնելու վրա:

Կնասպանության սահմանման և ընդգրկման վերաբերյալ ոլորտային քննարկումները շարունակվում են մինչ օրս, սակայն առավել համապարփակ սահմանումը հենց վերաբերում է կանանց սպանություններին նրանց կին լինելու փաստով և կապակցված է հայրիշխանական համակարգի կողմից կնոջ և աղջիկների կյանքի չարժևորման հետ, որն էլ իր հերթին հանգեցնում է կանանց և աղջիկների սպանությունների դյուրինությանը՝ պայմանավորված կնատյացության խորը արմատներով: Թերևս կնասպանության ուշագրավ օրինակներից է 1989 թ. դեկտեմբերի 6-ին Կանադայի Մոնրեալ քաղաքում գտնվող համալսարաններից մեկում տեղի ունեցած խմբակային սպանությունը: Մի երիտասարդ, մուտք գործելով համալսարանի շենք, կրակ բացեց ամբոխի մեջ՝ հատուկ նշանակետի տակ առնելով կանանց: Կանանց վրա կրակելիս նա բացականչում էր՝ «անիծված ֆեմինիստներ»: Այս արյունահեղության արդյունքում սպանվեց 14 կին, 9 կին վիրավորվեց: Այս կանայք սպանվեցին, որովհետև կին էին: Տղամարդու կողմից սպանության շարժառիթն էր այն փաստը, որ նա չէր ընդունվել համալսարանի ճարտարագիտական բաժին և դրա պատճառն էր համարում բուհի ընդունված կանանց, որոնք հանդգնել էին դիմել «տղամարդկանց համար նախատեսված» բաժին: Նա սպանեց անծանոթ կանանց միայն այն պատճառով, որ նրանք գրավել են տղամարդկանց համար նախատեսված «տարածքը»: Այս արարքի մեջ կա խորքային կնատյացություն և սեփական իշխանության կորստի զգացում և հետևաբար, այս արարքը խիստ քաղաքական բնույթ ունի[12]:

Կնասպանության այս և շատ այլ օրինակների վերլուծությունը վկայում է, որ ցանկացած դեպք պետք է դիտարկել անհատական պատասխանատվության տիրույթից վեր և դիտարկել քաղաքական համատեքստում՝ վեր-

11. Տե՛ս Psytel. 2010. Estimation de la mortalité liée aux violences conjugales en Europe: 'IPV EU Mortality.' DAPHNE Projet No. JLS/2007/DAP-1/140. Rapport scientifique. էջ 9-10, հասանելի է http://www.psytel.eu/violences.php հղումով:

12. Տե՛ս Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականությունը, Մակմիլան հրատարակչություն, 2012 թ., էջ 13:

լուծելով գենդերային հիմնախնդիրների ազդեցությունը տվյալ հանցանքի իրականացման շարժառիթների վրա:

Կնասպանության տեսակները

Մի շարք միջազգային կառույցներ և ոլորտի տեսաբաններ կնասպանության դասակարգման մեջ ընդգրկում են կանանց ցանկացած սպանություն, այդ թվում՝ ոչ կանխամտածված, որը նպատակ ունի վերահաստատել կնոջ վրա հայրիշխանական համակարգի կողմից կիրառվող իշխանությունը: Այս կնասպանության առավել տարածված ձևերից է ներկայիս կամ նախկին զուգընկերոջ կողմից կանանց սպանությունը, որոնք տևական ժամանակ եղել են նաև ընտանեկան բռնություն վերապրածներ[13]: Ընտանեկան բռնության արդյունքում սպանված կանայք հայրիշխանական հասարակության կողմից դիտվում են տվյալ տղամարդու «սեփականությունը», և տղամարդու կողմից սպանության իրականացումը համարվում է սեփական իշխանության հաստատման դրսևորում:

Հեղինակներ Ռեդֆորդը և Ռասելը նշում են, որ կնասպանությունն ունի շատ տարբեր դրսևորումներ, ինչպես օրինակ՝ **ռասիստական կնասպանությունը**, երբ սևամորթ կանայք սպանվում են տղամարդկանց կողմից իրենց ռասայական պատկանելիության պատճառով, **հոմոֆոբ կնասպանությունը**, երբ լեսբի և բիսեքսուալ կանայք են սպանվում իրենց սեռական կողմնորոշման պատճառով, **ամուսնական կնասպանությունը**, որն իրագործվում է ներկայիս կամ նախկին զուգընկերոջ կողմից և **կնասպանություն**, որն իրագործվում է **անծանոթի կողմից**[14]**:**

Ներկայիս կամ նախկին զուգընկերոջից բացի՝ կնասպանությունը կարող է իրականացվել[15]՝

- ընտանիքի այլ անդամների կողմից (հայր, որդի, սկեսրայր),
- մերձավոր ազգականների կամ ընկերների, հարևանների կողմից,
- անծանոթի կողմից:

---

13. Տե՛ս Ըմբռնել ու լուծել կանանց նկատմամբ բռնության խնդիրը, ԱՀԿ, 2012 թ., հասանելի է http://apps.who.int/iris/bitstream/handle/10665/77421/WHO_RHR_12.38_eng.pdf;jsessionid=7E6EFECBD717D4371CE9D0E3EA3B05A6?sequence=1 հղումով:

14. Տե՛ս Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականությունը, Մակմիլան հրատարակչություն, 2012 թ., էջ 7:

15. Տե՛ս Ռասել Դ. Ե. Հ., Հարմս Ռ. Ա. (խմբ.), Կնասպանությունը գլոբալ հեռանկարում, Նյու Յորք, Teachers College Press, 2001 թ., էջ 8-12:

2012 թ. Վիեննայում կայացավ գագաթնաժողով՝ նվիրված կնասպանության երևույթի քննարկմանը: Գագաթնաժողովի արդյունքում մշակվեց «Կնասպանության մասին» Վիեննայի հռչակագիրը, որը, չնայած դեռևս չի հաստատվել ՄԱԿ-ի անդամ երկրների կողմից, սակայն այս ոլորտում հանդիսանում է նշանակալից փաստաթուղթ[16]: Համաձայն այդ հռչակագրի՝ կնասպանությունը սահմանվում է որպես կանանց և աղջիկների՝ իրենց գենդերի պատճառով սպանություն, որը կարող է լինել հետևյալ տեսակների.

1) կանանց սպանություն նախկին և ներկայիս զուգընկերների կողմից,

2) խոշտանգումներով և կնատյացությամբ պայմանավորված սպանություն,

3) «պատվի համար» կամ «պատվի պատրվակով» կանանց և աղջիկների սպանություններ,

4) զինված հակամարտություններում կանանց և աղջիկների միտումնավոր սպանություն,

5) կանանց՝օժիտին վերաբերող հարցերի պատճառով սպանություն,

6) կանանց և աղջիկների՝ իրենց սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության պատճառով սպանություն,

7) տեղաբնիկ և ցեղաբնակ կանանց և աղջիկների՝ իրենց գենդերի պատճառով սպանություն,

8) կանանց սեռական օրգանների խեղման հետևանքով առաջացած մահ,

9) կախարդություն կամ հմայություններ անելու մեղադրանքով կանանց սպանություն,

10) կանանց և աղջիկների սպանություն՝ կազմակերպված հանցավորության, թմրամիջոցների գործարքների, մարդկային թրաֆիքինգի և սովորական սպառազինության տարածման հետ առնչություն ունեցող խմբերի կողմից և այլ դրսևորումներ:

Այսպիսով՝ տարբեր հեղինակների կողմից առաջարկված կնասպանության սահմանումների վերլուծությունը վկայում է, որ այն հայրիշխանական

16. Տե՛ս Կնասպանության մասին Վիեննայի հռչակագիր, հասանելի է http://www.dianarussell.com/vienna-declaration-.html հղումով:

համակարգի ներսում կանանց շարունակական սպանությունն է, որը հետապնդում է կանանց վրա իշխանության հաստատման նկրտում և դրդված է կնատյացության ներքին հակումներով: Ֆեմինիստ հետազոտող Ժաքլին Քամփբելը բացահայտել է, որ 1976-99 թթ. ԱՄՆ-ում կնասպանության դեպքերը 54%-ից հասել են 72%-ի: Հատկանշական է, որ սրանք այն տարիներն են, երբ ֆեմինիստներն ակտիվ պայքար էին մղում սեփական իրավունքների համար, ինչի արդյունքում կանանց աճող ինքնուրույնությունը դարձավ իրական սպառնալիք տղամարդկանց համար: Վերջիններս, վախենալով սեփական ուժի և իշխանության կորստից, գնացին ծայրահեղ քայլերի՝ ընդհուպ մինչև սպանության[17]:

17. Տե՛ս Կնասպանություն. գլոբալ խնդիր, որ գործել է պահանջում, 2013 թ., էջ 20, ՄԱԿ-ի համակարգերի ակադեմիական խորհուրդ (ACUNS) Վիեննայի գրասենյակ, հասանելի է http://www.genevadeclaration.org/fileadmin/docs/Co-publications/Femicide_A%20Gobal%20Issue%20that%20demands%20Action.pdf հղումով:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԿԱ ԿԱՊԸ

Հնագույն ժամանակներից ի վեր տղամարդիկ սպանել են կանանց ընտանիքի ներսում որևէ կոնֆլիկտային իրավիճակում: Որոշ մշակույթներում նորահարսերի հրկիզումը, «օժիտի համար» կամ «պատվի համար» սպանությունները մինչ օրս կիրառվող երևույթներ են, եթե կինը չի բավարարում իր ամուսնու և նրա շրջապատի սպասելիքները կամ իր վարքով հակադրվում է ավանդական արժեքներին: Ընտանիքի ներսում կանանց «ձախողումներով պայմանավորված» ծեծի, բռնաբարության, արժանապատվության ոտնահարման կիրառումը և կնոջ վարքով այդ բռնարարքների արդարացումը տարածված երևույթ է նաև Հայաստանում:

Ընտանեկան բռնությունը Հայաստանում մշակութային նորմ է, որը «խրախուսվում է» ավանդական կարծրատիպերի և հայրիշխանական մտածողության միջոցով, որն էլ իր հերթին ամրապնդվում է ինստիտուցիոնալ քաղաքականության և օրենսդրության միջոցով: Կանանց նկատմամբ բռնությունը դադարեցնելուն ուղղված բոլոր ջանքերը «հակասության մեջ են մտնում» ավելի մեծ իշխանություն ունեցող տղամարդկանց շահերի հետ, քանի որ այդ տղամարդկանց հենց կարգավիճակն է խրախուսում, երբեմն նաև պարտադրում կիրառել այդ բռնությունն՝ իրենց իսկ կանանց նկատմամբ[18]:

Կանանց նկատմամբ բռնությունը վերջիններիս նկատմամբ խտրականության դրսևորման առավել տարածված ձևերից է, որը գնահատվում է որպես

18. Տե՛ս Քամփբել Ջ., Ռունյան Ք., Կնասպանություն, հրավիրված խմբագիրներ, Ներածություն, Սպանությունների ուսումնասիրություն ամսագիր, 1998;2(4), էջ 347-352:

մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտում: Ավելին, կանանց նկատմամբ բռնությունը հիմնականում տեղի է ունենում ընտանեկան միջավայրում և դրսևորվում է ինչպես **ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական, սեռական և տնտեսական ձևերով**: Ամբողջ աշխարհում ընտանեկան բռնությունից հիմնական տուժողները կանայք ու աղջիկներն են: Ամեն երրորդ կինն աշխարհում ենթարկվում է բռնության որևէ տեսակի ներկայիս կամ նախկին զուգընկերոջ կողմից[19]:

Ընտանեկան բռնությունը ծայրահեղ խնդիր է, որին բախվում են Հայաստանում բնակվող կանայք: Հանրապետության ողջ տարածքում 2016 թ. անցկացված հարցման համաձայն՝ տղամարդ զուգընկեր կամ կողակից ունեցած կանանց 22.4%-ը և 45.9%-ը ենթարկվել է համապատասխանաբար ֆիզիկական և հոգեբանական բռնության: Տղամարդ զուգընկեր կամ կողակից ունեցած կանանց 19.5%-ն էլ նշել է, որ իրենց զուգընկերն արգելել է աշխատանքի անցնել կամ որևէ կերպ գումար վաստակել: Իսկ հարցմանը մասնակցած տղամարդկանց 7.6%-ը նշել է, որ ստիպել է որևէ կնոջ կամ աղջկա իր հետ սեռական հարաբերություն ունենալ: Նույն հետազոտությունը պարզել է կանանց նկատմամբ բռնության մշակութային ընդունելիությունը, այսինքն՝ հարցվածների մեկ երրորդից ավելին նշել է, որ կանայք պետք է հանդուրժեն բռնությունը, որպեսզի պահպանեն իրենց ընտանիքը, իսկ շուրջ երեք քառորդն էլ արտահայտել է համոզմունք, որ կողակցի կողմից բռնությունը կարելի է արդարացնել[20]:

ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ 2016 թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունը գրանցել է ընտանեկան բռնության 756 դեպք, որից 699-ը՝ ֆիզիկական բռնության, 4-ը սեռական բռնության դեպքեր են և 53 դեպք էլ այլ տեսակի բռնությամբ կատարված հանցագործություն է: Կանանց նկատմամբ նշված հանցանքներից 3-ը կատարվել են կենակցի կողմից, 471-ը՝ ամուսնու կողմից, 97-ը՝ ընտանիքի այլ անդամների կողմից և այլն[21]: Հարկ է նկատել, որ ընտանեկան բռնության պաշտոնական վիճակագրության մեջ աճ է գրանցվել 2017 թ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: 2017 թ. 12 ամիսների ընթացքում քննված քրեական գործերով և նյութերով գրանցվել է ընտանեկան բռնության 793 հանցագործություն, որից 740-ը՝ ֆիզիկական, իսկ 53-ը՝ այլ բռնությամբ կատարված հանցագործություն: Նշված 793 ընտանեկան բռնության դեպքերից զուգընկ-

---

19 Տե՛ս Կանանց նկատմամբ բռնություն, հիմնական փաստեր, ԱՀԿ, 2017 թ., հասանելի է http://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women հղումով:

20. Տե՛ս Վլադիմիր Օսիպով և Ջինա Սարգիզովա, Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրները Հայաստանում, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2016 թ.:

21. Տե՛ս 2016 թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 242:

կերոջ կողմից իրականացված բռնարարքներից գրանցվել է 1 դեպք, ամուսնու կողմից կնոջ նկատմամբ՝ 480 դեպք: Միաժամանակ 2017 թ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի մարմինների և ստորաբաժանումների կողմից ընտանեկան բռնության վերաբերյալ հարուցվել են 258 քրեական գործեր, իսկ ընդհանուր առմամբ 2017 թ. ՀՀ ՔԿ մարմինների և ստորաբաժանումների վարույթում եղել են ընտանեկան բռնությունների վերաբերյալ 458 քրեական գործեր: Վերը նշված 458 քրեական գործերից մեղադրական եզրակացությամբ դատարան են ուղարկվել 86-ը: 281 քրեական գործերով վարույթը կարճվել է, որից 69-ը՝ արդարացման հիմքով, իսկ 212-ը՝ ոչ արդարացման հիմքով[22]:

Վերոնշյալ վիճակագրական տվյալները չեն արտացոլում ընտանեկան և կանանց նկատմամբ բռնության ամբողջական և իրական պատկերը, քանի որ Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերի միասնական վիճակագրություն չի վարվում, բացի այդ՝ այս բռնարարքներն ունեն բարձր մակարդակի քողարկվածություն/լատենտայնություն[23]:

Պետության ստանձնած միջազգային պարտավորությունները և միջազգային ու տեղական կառույցների ճնշումը 2017 թ. ստիպեցին ՀՀ կառավարությանը ճանաչել ընտանեկան բռնություն երևույթը՝ մշակելով համապատասխան օրինագիծ, որը մի քանի անգամ լրամշակվեց և ի վերջո փոփոխվեց և անվանվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք, որն էլ ընդունվեց 2017 թ. դեկտեմբերին[24]:

Չնայած նրան, որ օրենքի ընդունումը դրական քայլ էր, այն շարունակում է չհամապատասխանել ընտանեկան բռնությունից կանանց պաշտպանության միջազգային իրավական նորմերին ու չափորոշիչներին[25]:

Ինչպես արդեն նշվեց, ամբողջ աշխարհում կնասպանության առավել հաճախ հանդիպող տեսակն է ներկայիս կամ նախկին զուգընկերոջ կողմից սպանությունը: Ընդ որում, բռնարարի և զոհի հարաբերությունների խզումը նշանակալի ռիսկային գործոն է կնասպանության համար: Մեծ Բրիտանիայում անցկացված հետազոտության արդյունքների համաձայն՝ կնասպանության զոհերի 76%-ը սպանվել է բռնարարի հետ հարաբերությունն-

22. Տե՛ս 2017 թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 305:

23. Տե՛ս նույն տեղում, էջ 305:

24. Տե՛ս Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին ՀՀ օրենքը, հասանելի է http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=118672 հղումով:

25. «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան մշակել է փաթեթ օրենքի դրույթների և միջազգային չափորոշիչների անհամապատասխանության վերաբերյալ:

ները խզելուց հետո 1 տարվա ընթացքում, ընդ որում, նրանցից 1/3-ը՝ մեկ ամսվա ընթացքում[26]:

Կնասպանության հնարավոր ռիսկերից կանանց պաշտպանության հարցում, թերևս, մեծ նշանակություն ունեն պետության պարտավորությունները: Այս տեսանկյունից կարևոր է, որ կնասպանության դեպքերը դադարեն դիտարկվել միայն հանցագործությունը կատարած անձի պատասխանատվության շրջանակում, այլ համարվեն հանրային և պետական պատասխանատվության առարկա:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված «Օփուզն ընդդեմ Թուրքիայի»[27] (2009) գործով դատարանը ճանաչեց, որ պետությունը հաշվետու պետք է լինի այն բոլոր դեպքերում, երբ ձախողել է պաշտպանել կանանց իրավունքներն ընտանեկան բռնությունից: «Օփուզն ընդդեմ Թուրքիայի», հետագայում նաև «Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի»[28] գործերով նախադեպային վճիռները հիմք ծառայեցին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ճանաչի կանանց նկատմամբ բռնությունը որպես համակարգային խնդիր, որն արտացոլում է ուժերի անհավասար բաշխումը: Այս դեպքերով դատարանը ընտանեկան բռնությունից կանանց պաշտպանության պատասխանատվությունը դրեց պետության վրա[29]:

Կնասպանության վերացման ուղղությամբ ցանկալի արդյունքների հասնելու համար շատ կարևոր է հակադրվել այն ավանդական և հայրիշխանական ինստիտուտներին, որոնք մշտապես ստորադասում են կանանց և գերակա դիրք ընձեռում տղամարդկանց՝ դրանով իսկ սերմանելով գենդերային անհավասարությունը, որն էլ հանդիսանում է կնասպանությունների իրական պատճառ: Կանայք կսպանվեն այնքան ժամանակ, քանի հասարակությունները գենդերայնացված են, որտեղ կանայք և նրանց տարբեր խմբեր ստորադասված են:

---

26. Տե՛ս Վերաիմաստավորելով առանձին պատահարը. կնասպանության վիճակագրությունը 2009-2015 թթ., Women's Aid և NIA, 2016 թ., հասանելի է https://1q7dqy2unor827bqjls0c4rn-wpengine.netdna-ssl.com/wp-content/uploads/2017/01/The-Femicide-Census-Jan-2017.pdf հղումով:
Ինչպես նաև՝
Նյու Սաութ Վելսի 2015-2017 թթ. Ընտանեկան բռնության մահացության ուսումնասիրության թիմի տարեկան հաշվետվություն, NSW կառավարություն, էջ 149, հասանելի է https://www.parliament.nsw.gov.au/lc/papers/DBAssets/tabledpaper/WebAttachments/72106/2015-2017_DVDRT%20REPORT%20PDF.pdf հղումով:

27. Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Օփուզն ընդդեմ Թուրքիայի, հասանելի է https://hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/?library=ECHR&id=001-92945&filename=001-92945.pdf հղումով:

28. Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Կոնտրովան ընդդեմ Սլովակիայի, հասանելի է https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/Kontrova%20v.%20Slovakia_en.asp հղումով:

29. Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի, Եվրոպայի շրջադարձային վճիռը կանանց նկատմամբ բռնության հարցում, Մարդու իրավունքների հանդես, համար 17, թողարկում 1, հոդված 5, 2009 թ., հասանելի համառոտագիր https://www.womenslinkworldwide.org/en/files/1153/opuz-v-turkey-europe-s-landmark-judgment-on-violence-against-women.pdf հղումով:

ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Զեկույցի այս հատվածում ներկայացվում են 2016-2017 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցված կնասպանության հասանելի դեպքերը:

Ինչպես արդեն նշվել է, զեկույցում կնասպանության իրական ցուցանիշների բացակայությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով.

1) Հայաստանի Հանրապետությունում առկա չեն ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ միասնական ճշգրիտ վիճակագրական տվյալներ:

Առհասարակ ընտանեկան բռնությունը լատենտային բնույթ ունեցող բռնության տեսակ է, ինչը նշանակում է, որ բռնության նշված տեսակի վերաբերյալ տեղեկություններն ու վիճակագրական ցուցանիշներն ամբողջությամբ չեն արտացոլում բռնության իրավիճակի իրական պատկերը:

Ավելին, մինչ 2017 թ. դեկտեմբերի 13-ին «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի[30] ընդունումը ներպետական օրենսդրությամբ սահմանված չէր «ընտանեկան բռնություն» միասնական հասկացությունը: Որպես հետևանք՝ յուրաքանչ-

30. Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672

յուր իրավասու մարմին տվյալները հավաքագրում էր՝ հաշվի առնելով իր կողմից յուրովի ընդունելի կարգավորումներն ու չափանիշները:

Հարկ է նկատել, որ ՀՀ քննչական կոմիտեում նախաքննության մարմինների կողմից քննչական աշխատանքի մասին վիճակագրական տվյալները հավաքագրվում են ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 23-ի «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» № 1225-Ն որոշմամբ[31], որում, սակայն, ընտանեկան բռնության վերաբերյալ քրեական գործերի հաշվառման վերաբերյալ առանձին հավելված կամ աղյուսակ նախատեսված չէ:

Նշված բացը լրացնելու նպատակով ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2016 թ. դեկտեմբերի 22-ի № 69-Լ հանձնարարականի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեում ներդրվել է «Ընտանեկան բռնության գործերի վերաբերյալ» հաշվետվության ձև: Հաշվետվությունն ընդգրկում էր վիճակագրական տվյալներ ընտանեկան բռնության վերաբերյալ քրեական գործերի նախաքննության արդյունքների մասին:

Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ նշված վիճակագրական տվյալներում[32] «ընտանեկան բռնություն» եզրույթը կիրառվել է 2014 թ. նոյեմբերի 17-ի՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանի 3-րդ կետում տրված ձևակերպման համատեքստում, որի համաձայն՝ «ընտանեկան բռնություն» եզրույթը մեկնաբանվում էր որպես *«… ֆիզիկական և հոգեբանական բռնի գործողություններ[ը], որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում, կամ նախկին (կամ ներկայիս) ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ նրանից, թե կատարողը բնակվում է կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում, թե ոչ»*:

ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝[33] սեռական և տնտեսական բռնությունները ևս ներառվել են նշված վիճակագրական տվյալների մեջ, «քանի որ թե՛ սեռական, թե՛ տնտեսական բռնությունն իրականացվում է ֆիզիկական կամ հոգեբանական բռնի գործողություններ իրականացնելով»:

Հետագայում օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ քննչական կոմիտեի վիճակագրության վարման համատեքստում կատարվել են որոշակի փոփոխություններ[34]: Ի թիվս այլնի՝ ներկայումս վիճակագրական տվյալների հավաքագրման գործընթացում «ընտանիքի անդամ» սահմա-

---

31. Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=57085

32. Տե՛ս http://investigative.am/news/view/yntanekan-brnutyunner.html

33. Տեղեկատվությունն ըստ ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավարի 2018 թ. հոկտեմբերի 26-ի № 08/22/1405218 գրության տվյալների:

34. Տե՛ս նույն տեղում:

նումը կիրառվում է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետին համապատասխան, որտեղ, սակայն, ներառված չեն զուգընկերային հարաբերությունների մեջ գտնվող անձինք: Արդյունքում առաջացել է այնպիսի իրավիճակ, երբ ոլորտը կարգավորող օրենքի ընդունմամբ զուգընկերների միջև ընտանեկան բռնության դեպքերն առհասարակ չեն ընդգրկվում վիճակագրական տվյալներում և այդ կերպ նպաստում բռնության իրավիճակի իրական պատկերի չարտացոլմանը:

Ընտանեկան բռնության դեպքերով վիճակագրական տվյալներ է ներկայացնում նաև ՀՀ ոստիկանությունը: Ի տարբերություն ՀՀ քննչական կոմիտեի, որտեղ վիճակագրության վարումն իրականացվում է ըստ քրեական գործերի՝ ՀՀ ոստիկանությունը վիճակագրական տվյալները ներկայացնում է ըստ դեպքերի:

Հարկ է, սակայն, նկատել, որ առկա պաշտոնական տվյալներն իրականում տարբերվում են ոչ պաշտոնական տվյալներից, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների «Թեժ գիծ» վստահության հեռախոսակապի հատուկ ծառայության միջոցով ստացված զանգերի տվյալներից[35]:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վիճակագրական տվյալների ոչ ամբողջական և իրական տվյալների բացակայության խնդրին անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն Հայաստանի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում[36]:

> **2)** Զեկույցի կազմման ընթացքում հնարավոր չի եղել ուսումնասիրել մինչդատական փուլում գտնվող կնասպանության վերաբերյալ քրեական գործերը: Ուսումնասիրության համար հասանելի չեն եղել նաև կարճված քրեական գործերը, ինչպես նաև այն քրեական գործերը, որոնց հարուցումը մերժվել է:

Այնուամենայնիվ ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկատվության[37] համաձայն՝ 2016-2017 թթ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի ստորաբա-

---

35. 2016-2017 թթ. ընթացքում «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի միայն «Թեժ գիծ» վստահության հեռախոսակապի հատուկ ծառայության միջոցով գրանցվել է շուրջ 10,600 ահազանգ:

36. Տե՛ս ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/402/29/PDF/N1640229.pdf?OpenElement

37. Տեղեկատվությունն ըստ ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավարի 2018 թ. հունիսի 6-ի № 22/22/5580-18 գրության տվյալների:

ժանումներում քննվել է կանանց սպանության դեպքերով հարուցված 19 քրեական գործ, որոնցից 3-ով վարույթը կարճվել է: Նույն ժամանակահատվածում ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում գրանցվել է կանանց նկատմամբ կատարված ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով (Ինքնասպանության հասցնելը) նախատեսված հանցագործության հատկանիշներ պարունակող 61 դեպք, որոնցից 18-ով նախապատրաստված նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է, իսկ 43-ով՝ հարուցվել են քրեական գործեր: Նշված 43 քրեական գործերից 2-ի քննության ընթացքում անձը մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածով: Մասնավորապես՝ 1 քրեական գործով անձը մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), իսկ մեկ այլ գործով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (Սպանությունը):

ՀՀ ոստիկանության տրամադրած տեղեկատվության[38] համաձայն՝ 2016 թ. ընթացքում արձանագրվել է ընտանիքում կանանց սպանության 3, իսկ 2017 թ.՝ 4 դեպք:

Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ ՀՀ դատական դեպարտամենտը կնասպանության դեպքերով վիճակագրություն չի վարում:

Դատական դեպարտամենտի կողմից դատական վիճակագրությունը վարվում է «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի[39] 19-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2015 թ. մարտի 19-ի «Դատական գործերի դասակարգումը, դատական վիճակագրության՝ պարտադիր հրապարակման ենթակա վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը և հրապարակման կարգը, վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանելու մասին» № 306-Ն որոշմամբ[40] սահմանված կարգով, որտեղ, սակայն, բացակայում է կնասպանության դեպքերով վիճակագրական տվյալների հավաքագրման պարտականությունը:

Այնուհանդերձ, ՀՀ դատական դեպարտամենտը տրամադրել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում 2016-2017 թթ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով (Սպանությունը), 110-րդ հոդվածով (Ինքնասպանության հասցնելը), 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ) և 119-րդ հոդվածով (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) ստացված քրեական գործերի համարները, որոնց ուսումնասիրության արդյուն-

38. Տեղեկատվությունն ըստ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 2018 թ. օգոստոսի 7-ի № 3/8511 գրության տվյալների:

39. Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119531

40. Տե՛ս http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96715

քում առանձնացվել են զեկույցում նկարագրված դեպքերը:

Հարկ է նաև ընդգծել, որ 2016-2017 թթ. ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածով (Ինքնասպանության հակելը) նախատեսված արարք չի արձանագրվել ՀՀ քննչական կոմիտեում և ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում 2016-2017 թթ. ընթացքում նշված հոդվածով գործեր ևս չեն ստացվել:

3) Զեկույցի կազմման ընթացքում ուսումնասիրվել են բացառապես այն քրեական գործերը, որոնք հասանելի են «DataLex» դատական տեղեկատվական համակարգում և այն շրջանակներում ու ծավալներով, որոնք ներկայացված են տեղեկատվական այդ հարթակում: Նշվածի կապակցությամբ հարկ է նկատել, որ 2016-2017 թթ. ընթացքում կնասպանության դեպքերը, որոնց վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն առկա չէ այդ համակարգում կամ այդ տեղեկատվության հասանելիությունը սահմանափակ է, նույնպես չեն ներառվել զեկույցում:

4) Ուսումնասիրության ընթացքում «DataLex» դատական տեղեկատվական համակարգի քրեական գործերի ուսումնասիրությամբ հայտնաբերվել են քրեական գործեր, որտեղ կատարված հանցագործությամբ տուժող անձի սեռը պարզել հնարավոր չի եղել՝ գործերում տուժողի անվան ոչ ամբողջական լինելու, ինչպես նաև սեռի վերաբերյալ նշում չպարունակելու պատճառով և, որպես հետևանք, նշված քրեական գործերը ևս չեն ներառվել սույն զեկույցում:

Արդյունքում, ՀՀ դատական դեպարտամենտի տրամադրած տեղեկատվության հիման վրա «DataLex» դատական տեղեկատվական համակարգի միջոցով ուսումնասիրվել են 120 դատական գործեր, որոնցից.

- 98 դատական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով (Սպանությունը).
- 9 դատական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ).
- 8 դատական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը).
- 5 դատական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով (Ինքնասպանության հասցնելը):

Նշված գործերը նախ խմբավորվել են՝ ըստ տուժողների սեռի, այնուհետև գործերի ուսումնասիրության արդյունքում առանձնացվել են կնասպանության դեպքերը:

Գործերի ուսումնասիրության սկզբնական փուլում 98 քրեական գործերից առանձնացվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի հատկանիշներով հանցագործությունների 22 դեպք, որոնցից.

- 3 քրեական գործերով հնարավոր չի եղել պարզել տուժողի սեռը.
- 3 քրեական գործերով սպանությունը տեղի է ունեցել 2015 թ.ին.
- 4 քրեական գործերով բացահայտվել են ակնհայտ շահադիտական դրդումներով սպանության դեպքեր.
- 2 քրեական գործերով ակնհայտ բացակայել են կնասպանության հնարավոր դրսևորումները.
- 10 քրեական գործերով հայտնաբերվել են կնասպանության դեպքեր:

Արդյունքում, սույն հետազոտության ուսումնասիրության շրջանակներում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով որակված հանցագործություններից քննարկվելու են 10 քրեական գործեր:

Նշված 10 քրեական գործերից 9-ը որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (Հասարակ սպանություն), իսկ 1 քրեական գործը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով (Սպանություն՝ զուգորդված բռնաբարությամբ կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններով):

Նույն տրամաբանությամբ առանձնացվել են նաև մնացյալ հոդվածներով քրեական գործերը:

ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ) որակված 9 քրեական գործերից 2-ի դեպքում հայտնաբերվել են կնասպանության դեպքեր, իսկ 1 դեպքով հնարավոր չի եղել պարզել տուժողի սեռը:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով (Ինքնասպանության հասցնելը) որակված դեպքերին, ապա հարկ է նշել, որ վերջիններիս հասանելիության սահմանափակ լինելու պատճառով հնարավոր չէ քննարկել այդ դեպքերը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով

(Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) ստացված քրեական գործերում թեպետ բացակայում են կնասպանության դեպքերը, այնուամենայնիվ ուսումնասիրված 8 քրեական գործերից 5-ով որպես տուժող հանդես են եկել կանայք:

Արդյունքում, ուսումնասիրված բոլոր քրեական գործերից առանձնացվել են 2016-2017 թթ. ընթացքում կատարված 12 կնասպանության դեպքեր, որոնց ներկայացման մեթոդաբանությունը քննարկվում է հաջորդիվ:

ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Զեկույցում ներառված կնասպանության դեպքերը ներկայացվում են 3 ենթավերնագրերի ներքո.

1) Կնասպանության դեպքեր, որոնցով քրեական գործերի դատաքննությունն ավարտված է և առկա է դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

Նշված գործերով կնասպանության դեպքերի որոշ մասը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով (Հասարակ սպանություն), 104-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով (Սպանություն՝ զուգորդված բռնաբարությամբ կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններով) և 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով (Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը՝ անզգուշությամբ առաջացնելով տուժողի մահ):

Տվյալ գործերով վերջնական դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում հնարավոր է դարձել վեր հանել այն հիմնական խնդիրները, որոնք առկա են ներպետական օրենսդրության մեջ և որոնց կիրառելիության դեպքում նշված հանցագործություն կատարած անձի նկատմամբ դատարանը պատասխանատվության և պատժի հարցերը որոշելիս հնարավորություն չի ունեցել կիրառել առավել խիստ պատիժ, իսկ որոշ դեպքերում էլ օրենսդրական կարգավորումների բացակայության արդյունքում առաջացել են պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ:

Սույն զեկույցում ներկայացվում են 5 քրեական գործեր, որոնցով քրեական գործերի դատաքննությունն ավարտված է, և առկա է դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ: Նշված 5 քրեական գործերից 3-ով կա-

տարված արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 1 քրեական գործ որակվել է 104-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով և 1 քրեական գործ՝ 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով:

2) Կնասպանության դեպքեր, որոնցով քրեական գործերի դատաքննությունն ավարտված չէ, և առկա չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռ:

Նշված գործերով տեղեկատվությունն ամբողջական չէ, և կատարված հանցագործությունները ներկայացված են ըստ իրենց հասանելիության ծավալի:

Սույն զեկույցում ներկայացվում են դեռևս չավարտված դատաքննությամբ 3 քրեական գործեր, որոնք որակվել են ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

3) Կնասպանության դեպքեր, որոնք դատարանի գնահատմամբ կատարվել են անմեղսունակության վիճակում:

Նշված գործերը ներկայացվում են ցույց տալու, որ հնարավոր են նաև դեպքեր, երբ կնասպանությունը տեղի է ունենում հոգեկան անհավասարակշիռ վիճակում, սակայն նշված դեպքերը շատ ավելի քիչ տոկոս են կազմում, իսկ որոշ դեպքերում էլ, թեպետ դատարանը կատարված հանցագործությունը որակում է որպես անմեղսունակության վիճակում կատարված արարք, այնուհանդերձ, հանցագործություն կատարած անձը, այդ նույն ժամանակահատվածում ունենալով հնարավորություն, չի սպանում մեկ այլ անձի՝ գիտակցելով այլ անձի վնասելու և սպանելու անթույլատրելիությունը:

Սույն զեկույցում ներկայացվում են դատարանի գնահատմամբ անմեղսունակության վիճակում կատարված հանցագործության 4 դեպք, որոնցից 3-ի դեպքում կատարված արարքը որակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ 1 քրեական գործ՝ 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով:

1) ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԱԾ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱԾ ԴԱՏԱՎՃՌՈՎ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

Ռուզան Ջ.[41]

Ռուզան Ջ.-ին սպանել է իր հետ փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը:

Գործի դատավարական նախապատմությունը

2016 թ. ապրիլի 15-ին՝ ժամը 00:40-ի սահմաններում՝ Ռուզան Ջ.-ի հետ փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող Արման Ս.-ն, վերջինիս նկատելով Վեդի քաղաքի Արարատյան փողոցում հեռախոսով խոսելիս և կասկածելով իրեն դավաճանելու մեջ, շուրջ երկու-երեք կիլոմետր հետևելով նրան, ժամը 01:00-ի սահմաններում Վեդի-Վանաշեն ավտոճանապարհի երկրորդ կիլոմետրի հատվածում հասնելով Ռուզան Ջ.-ին, խանդի հողի վրա բռունցքով հարվածել է նրա միջհոնքային հատվածին, ինչի հետևանքով վերջինս ծնկել է, այնուհետև ձեռքով հարվածել է նրա այտին, ինչի հետևանքով Ռուզան Ջ.-ն մեջքով ընկել է գետնին: Դրանից հետո Արման Ս.-ն սկսել է ոտքերով հարվածներ հասցնել Ռուզան Ջ.-ի մարմնի տարբեր մասերին, որից հետո տեսնելով, որ նա անշարժացել է, նրա թևատակերից բռնելով քաշել է շուրջ 30 մետր, թողել Վեդի-Վանաշեն ավտոճանապարհի աջ մասում գտնվող խոտերի վրա ու հեռացել: Արման Ս.-ն առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել և հրաժարվել ցուցմունք տալուց:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Դատաբժշկական փորձաքննությամբ հաստատվել է, որ Ռուզան Ջ.-ի մահը վրա է հասել գանգի, կրծքավանդակի, որովայնի, կոնքի, աջ վերին վերջույթի բութ համակցված տրավմայից զարգացած տրավմատիկ հենոռագիկ շոկից:

Դատահոգեբուժական փորձաքննությամբ էլ հաստատվել է, որ Արման Ս.-ն ինչպես արարքը կատարելիս, այնպես էլ գործի քննության ընթացքում եղել է մեղսունակ, արարքը կատարելիս գիտակցել է իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել դրանք:

41. Տե՛ս դատական գործ № ԱՎԴ1/0038/01/16

Դատարանի եզրահանգումը

Վերլուծելով դատաքննությամբ հետազոտված ապացույցները, դրանցից յուրաքանչյուրը գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից՝ դատարանը հանգել է այն հետևության, որ Արման Ս.-ն կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված հանցագործությունը (նշված արարքը պատժվում է ազատազրկմամբ՝ 8-15 տարի ժամկետով), որը վերջինս կատարել է մեղավորությամբ և այն կատարելու համար ենթակա է քրեական պատասխանատվության և պատժի:

Անդրադառնալով պատիժ նշանակելիս ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում հաշվի առնվող մեղմացնող հանգամանքների չափանիշների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշմանն[42] առ այն, որ *«…Դատարանի լայն հայեցողության շրջանակներում է (...) անձի պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքների կիրառման հարցը (...), այնուհանդերձ դատարանի այս լիազորությունը բացարձակ չէ, և որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է բավարարեն որոշակի չափանիշների: Դրանք են.*

ա) հանգամանքը պետք է իրական լինի, այսինքն՝ գործով ձեռք բերված ապացույցները պետք է հաստատեն դրա առկայությունը,

բ) այն պետք է ողջամտորեն նվազեցրած լինի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը,

գ) այն հաստատված ճանաչելիս դատարանը պետք է պահպանի ապացուցման ընդհանուր քրեադատավարական կանոնները. հանգամանքի առկայությունը հաստատող ապացույցները պետք է վերաբերելի և թույլատրելի լինեն, դրանք պետք է հետազոտված լինեն դատաքննության ընթացքում, ինչպես նաև պետք է պահպանեն ապացույցների ստուգման և գնահատման օրենսդրական պահանջները»:

Գործով ներկայացված այլ ապացույցներն ու ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները կիրառելով դատավճռում արձանագրված փաստական տվյալների նկատմամբ՝ դատարանը որպես ամբաստանյալ Արման Ս.-ի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք հաշվի է առել նախկինում դատապարտված կամ որևէ այլ կերպ արատավորված չլինելու, երիտասարդ լինելու հանգամանքները: Դատարանը միաժա-

42. Տե՛ս մանրամասն ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թ. հունիսի 1-ի Պարույր Բայրամյանի վերաբերյալ № ՎԲ-84/07 գործով որոշումը, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=37131

մանակ արձանագրել է, որ ամբաստանյալ Արման Ս.-ի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքներ չկան:
Արդյունքում դատարանը հանգել է այն հետևության, որ Արման Ս.-ն մեղավոր է, և նրա նկատմամբ պետք է պատիժ նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիայով նախատեսված պատժատեսակի՝ ազատազրկման ձևով 10 տարի ժամկետով:

Նարինե Դ.[43]

Նարինե Դ.-ին սպանել է ամուսինը:

Գործի դատավարական նախապատմությունը

Նարինե Դ.-ն և Արթուր Մ.-ն համատեղ ամուսնական կյանքի ընթացքում ունեցել են 3 երեխա: Կնոջ՝ իրեն դավաճանելու կասկածների պատճառով՝ Արթուր Մ.-ն հաճախակի է վիճել կնոջ հետ, ինչին ականատես են եղել նաև նրանց երեխաները: Հերթական անգամ Արթուր Մ.-ն կնոջ հետ վիճել է 2016 թ. սեպտեմբերի 16-ին, և այդ վեճը շարունակվել է նաև հաջորդ օրը՝ սեպտեմբերի 17-ին, որի ժամանակ Նարինե Դ.-ն հայտնել է, որ ցանկանում է ամուսնուց բաժանվել, ինչին ի պատասխան՝ Արթուր Մ.-ն կնոջը սպառնացել է, որ կսպանի:

Սեպտեմբերի 19-ին Արթուր Մ.-ն և Նարինե Դ.-ն միասին իրենց ավտոմեքենայով գնացել են Արմավիրի մարզի Արևիկ և Զարթոնք գյուղ՝ բանջարեղեն գնելու: Դրանից հետո Նարինե Դ.-ն և Արթուր Մ.-ն վերադարձել են Զարթոնք գյուղ, որտեղ վերջինիս հարազատներին հանդիպելուց հետո մեքենայով շարժվել են դեպի Երևան:

Ճանապարհին Նարինե Դ.-ի և Արթուր Մ.-ի միջև կրկին վիճաբանություն է ծագել վերջինիս՝ կնոջ նկատմամբ դրսևորած խանդի պատճառով, որի ժամանակ Արթուր Մ.-ն սկզբում մեքենայի մեջ, իսկ այնուհետև մեքենայից դեպի աջ ընկած դաշտամիջյան հատվածում ծեծել է կնոջը՝ հարվածելով նրա մարմնի տարբեր մասերին, ինչպես նաև ձեռքով սեղմել է Նարինե Դ.-ի պարանոցին և շնչահեղձ անելով՝ սպանել է նրան:

Դատաբննությամբ հետազոտված ապացույցները

Գործի քննության ընթացքում նախատեսված հանցագործության կատարման մեջ առաջադրված մեղադրանքում Արթուր Մ.-ն իրեն մեղավոր է ճա-

43. Տե՛ս դատական գործ № ԱՐԴ/0022/01/17

նաչել մասնակի և հայտնել, որ ինքը «պարզապես» կնոջը ծեծել է, բայց սպանելու դիտավորություն չի ունեցել: Իրենց միջև առաջացած վեճի պատճառով նրանք մեքենայից դուրս են եկել, և Նարինե Դ.-ն ասել է, որ իրենից բաժանվում և գնում է, ինչին խոչընդոտելու նպատակով՝ Արթուր Մ.-ն քաշել է կնոջ հագուստից ու մի քանի անգամ ձեռքերով հարվածել՝ փորձելով թույլ չտալ, որ հեռանա: Քաշքշուկի պատճառով երկուսն էլ ընկել են ջրատարը: Արթուր Մ.-ի պնդմամբ՝ ջրատարի մեջ տեսնելով, որ կնոջ մազերը փաթաթվել են ծառերի ճյուղերին, ու նա անկանոն շարժումներ է կատարում, մոտեցել է նրան, փորձել է մազերն առանձնացնել ճյուղերից և փրկել նրան, սակայն, կնոջը ջրից դուրս հանելով ափ, զգացել է, որ նա այլևս չի շարժվում:

Դատաքննությամբ և գործի փաստական տվյալներով պարզ է դարձել, որ Նարինե Դ.-ի մահը վրա է հասել պարանոցի օրգանների՝ բութ առարկայով անմիջական ներգործության՝ սեղմելու հետևանքով առաջացած մեխանիկական շնչահեղձությունից: Դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ հաստատվել է, որ մահացած Նարինե Դ.-ի ենթալեզվային ոսկորը կոտրված է եղել, որը եղել է թարմ կոտրվածք՝ արտաքին սեղմման պատճառով, այն է՝ 3 կոտրվածք ձախ կեսին, մեկը՝ աջ կեսին, որը բնորոշ է ձեռքով սեղմելուն: Նարինե Դ.-ի մահը վրա չի հասել ջրահեղձությունից, այլ մեխանիկական շնչահեղձությունից, քանի որ ջրահեղձման ժամանակ կոկորդի և թոքերի մեջ ջրի առկայություն պետք է լինի, ինչը բացակայել է Նարինե Դ.-ի մոտ:

Գործով ներգրավված վկաների ցուցմունքներից պարզ է դարձել, որ Նարինե Դ.-ն ամուսնության ընթացքում պարբերաբար ենթարկվել է ընտանեկան բռնության: Վկաներից մեկի ցուցմունքի համաձայն՝ ամուսնության հենց սկզբից Արթուր Մ.-ն դրել է բազմաթիվ արգելքներ, մասնավորապես՝ մոտակա խանութ չգնալ, չբարևել այն մարդկանց, որոնց նա չի ցանկանում և այլն: Առաջին անգամ Արթուր Մ.-ն ծեծել է Նարինե Դ.-ին, երբ վերջինս պատուհանից դուրս է նայել ցատկապարանով խաղացող երեխաներին, իսկ ամուսինը պատճառաբանել է, թե սիրեկանին է նայում: Հետագա ամուսնական կյանքի ընթացքում նման դեպքերը պարբերաբար կրկնվել են:

Համանման դեպքերից մեկի ժամանակ, ինչի մասին նշում են նաև Նարինե Դ.-ի և Արթուր Մ.-ի՝ գործով որպես վկաներ ներգրավված անչափահաս երեխաները, *«… մոտ երեք տարի առաջ, երբ մայրիկն աշխատելիս է եղել պապիկի խանութում, աղբը տարել է, որ թափի, այդ ժամանակ մյուս խանութի աշխատողը բարևել է մայրիկին, իսկ մայրիկն էլ պատասխանել է բարևին: Հայրիկը, դա տեսնելով, բարկացել է մայրիկի վրա և նրան տարել Սովետաշենի գերեզմանոց: Ճանապարհին մայրիկը զանգահարել է պապիկին և օգնության է կանչել: Պապիկն այդ ժամանակ գնացել և մայրիկին տուն է բերել: Դրա հաջորդ օրը հայրիկը մայրիկին տարել է Հոկտեմբերյանի ինչ-որ դաշտեր ու սպառնացել, որ կխեղդի: Վերջին շրջանում հայրիկը մայրիկին չէր ծեծում, քանի որ մայրիկն ասել էր, որ կդիմի ոստիկանություն»:*

Դեպքի վայրում հայտնված վկաները նշել են, որ երբ իրենք մոտեցել են մե-

քենային, և փորձել են հասկանալ, թե ինչ է կատարվել, նկատել են Արթուր Մ.-ին՝ նստած մեքենայի աջ նստատեղին՝ ցրված և անտարբեր հայացքով: Այն հարցին, թե ինչ է պատահել, վերջինս պատասխանել է, որ կնոջը խեղդել ու գցել է ջուրը: Վկաներից մեկի հարցին, թե ինչու, Արթուր Մ.-ն պատասխանել է՝ *«Ընտենցներին ընտենց էր պետք»:*

Հարկ է նկատել, որ արարքի կատարման պահին Արթուր Մ.-ն եղել է մեղսունակ, իսկ փորձաքննությունից ստացված մազի փորձանմուշի մեջ թմրակտիվ և հոգեմետ բաղադրատարրեր չեն հայտնաբերվել, ինչը փաստում է, որ վերջինս արարքը կատարելիս գիտակցել է իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել է դրանք:

Դատարանի եզրահանգումը

Նշված գործով դատաքննության ընթացքում դատարանը որպես ամբաստանյալ Արթուր Մ.-ի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտարկել խնամքին մինչև 14 տարեկան երկու երեխաների առկայությունը: Միևնույն ժամանակ դատարանը պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք դատաքննությամբ չի հայտնաբերել:

Արդյունքում դատարանը հանգել է այն եզրակացության, որ Արթուր Մ.-ն մեղավոր է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքում, և նրա նկատմամբ պետք է պատիժ նշանակել ազատազրկում՝ 9 տարի ժամկետով:

Հետագայում նշված դատական ակտը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարանում, և Արթուր Մ.-ի նկատմամբ նշանակված պատժի մասով ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատավճիռը փոփոխվել է, և նշանակվել է ազատազրկում՝ 11 տարի ժամկետով:

Սուսաննա Գ.[44]

Սուսաննա Գ.-ին սպանել է ազգականը. սպանությունը զուգորդվել է Սուսաննա Գ.-ի բռնաբարությամբ:

Գործի դատավարական նախապատմությունը

2016 թ. մայիսի 10-ին՝ ժամը 01:00-ից 02:00-ի սահմաններում, հարբած վիճակում Արսեն Մ.-ն սեռական հարաբերություններ ունենալու նպատակով

44. Տե՛ս դատական գործ № ԼԴ2/0076/01/16

որոշել է գնալ հորաքրոջ դստեր՝ «շիզոֆրենիա պարանոիդ ձև, մտավոր հետամնացություն» ախտորոշում ունեցող Սուսաննա Գ.-ի առանձնատուն:

Մտնելով վերջինիս տուն՝ տեսել է հորաքրոջ դստերն անկողնում պառկած: Նստելով նրա մահճակալին՝ «անպարկեշտ վարքագիծ» է դրսևորել, ինչին Սուսաննա Գ.-ն ընդդիմացել է: Դրանից հետո Արսեն Մ.-ն հարվածել է Սուսաննա Գ.-ին և նրա ձայնն անլսելի դարձնելու նպատակով մահճակալի մոտ գտնվող պահարանի դարակից վերցրել է թափանցիկ կպչուն ժապավեն և, սեղմելով Սուսաննա Գ.-ի ձեռքերը, այդ ժապավենով փակել է վերջինիս բերանը: Այնուհետև կապել է նրա ձեռքերն ու սրբիչը դնելով բերանին՝ ուժեղ սեղմել է և այդպես պահելով մոտավորապես 5 րոպե՝ տեսել է, որ նա չի շարժվում, և մահացել է, ինչից հետո բռնաբարել է Սուսաննա Գ.-ին և կատարված հանցագործության հետքերը թաքցնելու նպատակով այրել է ինչպես այդ, այնպես էլ հարևան սենյակի անկողինը, որպեսզի այրվի ամբողջ տունն ու դիակը:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Առաջադրված մեղադրանքում ամբաստանյալ Արսեն Մ.-ն թե՛ քրեական գործի նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում իրեն լիովին մեղավոր է ճանաչել և հայտնել, որ ալկոհոլային հարբածության պատճառով չի հասկացել և չի գիտակցել իր գործողությունները, մինչդեռ ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Արսեն Մ.-ն հանցանքը կատարելիս եղել է մեղսունակ, գիտակցել է իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել է դրանք: Հանցագործությունը կատարելիս նա չի գտնվել հոգեկան գործունեության ժամանակավոր հիվանդագին խանգարված վիճակում, որը կարող էր զրկել նրան իր գործողությունների վտանգավորությունը գիտակցելուց և դրանք ղեկավարելուց:

Արսեն Մ.-ին մեղսագրված հանցանքը, նրա խոստովանական ցուցմունքներից բացի, հաստատված է նաև քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով:

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Սուսաննա Գ.-ի մահը հետևանք է մեխանիկական շնչահեղձության, բնորոշ է փափուկ առարկաներով շնչուղիների փակելուն, և շնչուղիների հարակից շրջաններում՝ քթի, ստորին ծնոտի լորձաթաղանթի քերծվածքների և արյունազեղման առկայությունը վկայում են նշված շրջաններում կողմնակի անձի ուժի գործադրման մասին:

Դատարանի եզրահանգումը

Դատարանը, յուրաքանչյուր ապացույց գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցության մեջ

գործի լուծման համար բավարարության տեսանկյունից դրանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության վրա հիմնավոր է համարել, որ Արսեն Մ.-ն կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով նախատեսված արարքը, այն է՝ սպանությունը՝ զուգորդված բռնաբարությամբ կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններով, որը պատժվում է ազատազրկմամբ՝ 12-20 տարի ժամկետով կամ ցմահ:

Միևնույն ժամանակ դատարանն արձանագրել է, որ Արսեն Մ.-ի պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ չկան, իսկ նրա պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է համարվում հանցագործությունն ալկոհոլային հարբածության վիճակում կատարելը:

Արդյունքում Արսեն Մ.-ն մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտվել ազատազրկման՝ 14 տարի ժամկետով:

Ալինա Մ.[45]

Ալինա Մ.-ին սպանել է ամուսինը:

Գործի դատավարական նախապատմությունը

2016 թ. նոյեմբերի 25-ին՝ ժամը 02:30-ից մինչև 03:00-ն ընկած ժամանակահատվածում, խանդի հողի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ Արամ Մ.-ն ձեռքերով հարվածներ է հասցրել Ալինա Մ.-ի դեմքին և մարմնի տարբեր մասերին՝ քթի, մեջքի, աջ արմնկային հոդի, աջ գոտկային շրջանի քերծվածքների, ձախ ստորկզակային, աջ բազկի շրջանների, աջ և ձախ գագաթային շրջանների արյունազեղումների ձևով, այնուհետև վերջինիս առողջությանը ծանր վնաս պատճառելու դիտավորությամբ խոհանոցային դանակով հարվածել է Ալինա Մ.-ի աջ ազդրի վերին երրորդի առաջնային մակերեսին՝ նրա առողջությանը դիտավորությամբ պատճառելով աջ դաստակի 4-րդ մատի շրջանի մակերեսային կտրված վերքի, աջ ազդրի շրջանի առաջնային մակերեսի ծակված-կտրված վերքի, քառագլուխ մկանի, փակեղների, ազդրային զարկերակի, երակի մասնակի վնասումով արտաքին արյունահոսության առկայություններով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, որպիսի վնասվածքներն անզգուշությամբ առաջացրել են Ալինա Մ.-ի մահը:

45. Տե՛ս դատական գործ № ԵՇԴ/0024/01/17

Դատարանի եզրահանգումը

Մինչ դատաքննությունն սկսելն ամբաստանյալ Արամ Մ.-ն միջնորդել է դատական քննությունն անցկացնել արագացված կարգով և հայտարարել է, որ առաջադրված մեղադրանքում իրեն լիովին մեղավոր է ճանաչում:

Նշված միջնորդությունը բավարարվել է դատարանի կողմից, և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375^3 հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով դատարանն արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարել, սակայն ուսումնասիրել է ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Արդյունքում դատարանը որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ հաշվի է առել այն, որ Արամ Մ.-ն ներկայացել է մեղայականով, աջակցել է հանցագործության բացահայտմանը, ինչն արտահայտվել է նրանով, որ վերջինս մասնակցել է քննչական փորձարարությանը, որի ժամանակ մանրամասն նկարագրել է դեպքի մանրամասները, նրա խնամքին է գտնվում երրորդ կարգի հաշմանդամություն ունեցող հայրը:

Որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք՝ դատարանը հաշվի է առել, որ Արամ Մ.-ն հանցանքը կատարել է ալկոհոլի ազդեցության տակ:

Արդյունքում դատարանը վճռել է Արամ Մ.-ին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով նախատեսված արարքում, այն է՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ, և պատիժ նշանակել ազատազրկում 6 տարի 8 ամիս ժամկետով:

Հայկուշ Ս.[46]

Հայկուշ Ս.-ին սպանել է խորթ որդին:

Գործի դատավարական նախապատմությունը

1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի պատճառով Հովհաննես Չ.-ի մայրը մահացել է, և նա գտնվել է հոր խնամքի տակ: 1991 թ. հայրն ամուսնացել

46. Տե՛ս դատական գործ № ԾԴ2/0040/01/16

է Հայկուշ Ս.-ի հետ: Հոր մահվանից հետո Հովհաննես Չ.-ն բնակվել է Հայկուշ Ս.-ի հետ: Համատեղ կյանքի ընթացքում Հովհաննես Չ.-ն հաճախակի է վիճել Հայկուշ Ս.-ի հետ և ունեցել է լարված հարաբերություններ: Հայկուշ Ս.-ն սպանվել է 2016 թ. սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում՝ մարմնի տարբեր մասերին հասցված վնասվածքների պատճառով:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Գործով մեղադրյալ Հովհաննես Չ.-ի ցուցմունքերի համաձայն՝ նշված օրը վերջինս տեսել է 2-րդ կարգի հաշմանդամություն ունեցող իր խորթ մորն իրենց տան բակի մոտ գտնվող փողոցում. նա, գտնվելով հոգեկան անհավասարակշիռ վիճակում, ինքն իր հետ խոսելիս է եղել և ասել է, որ ցանկանում է տնից հեռանալ և ինչ-որ տեղ գնալ: Հովհաննես Չ.-ն ցանկացել է Հայկուշ Ս.-ին տուն տանել, սակայն վերջինս հակառակվել է, ինչի պատճառով Հովհաննես Չ.-ի «նյարդերը տեղի են տվել», և Հայկուշ Ս.-ի մազերից քաշելով՝ տարել է դեպի տուն: Ճանապարհին բռունցքով հարվածել է վերջինիս գլխի գագաթային հատվածին, իսկ ձեռքերով և ոտքերով մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Հայկուշ Ս.-ին ուժով տուն մտցնելու ընթացքում մեջքից հրել է, ինչի հետևանքով վերջինս կորցրել է հավասարակշռությունն ու բակում ընկել: Մոտենալով Հայկուշ Ս.-ին՝ տեսել է, որ վերջինս ընկնելու հետևանքով գլխի գագաթային շրջանում արյունահոսող մարմնական վնասվածք է ստացել, որից հետո, Հայկուշ Ս.-ին թևանցուկ անելով, քաշելով մտցրել է հյուրասենյակ, լվացել է գլուխն ու պառկեցրել իր անկողնում և զբաղվել տնային գործերով: Այդ ընթացքում տանը մոտ 250 գրամի չափով օղի է խմել: Մոտավորապես 10 րոպե անց Հայկուշ Ս.-ն, անկողնուց վեր կենալով, ցանկացել է տնից հեռանալ, սակայն նրան տնից դուրս չթողնելու նպատակով Հովհաննես Չ.-ն ձեռքերով և ոտքերով հարվածել է վերջինիս մարմնի տարբեր մասերին և հյուրասենյակի մուտքի դռան կողքից վերցնելով հատակ լվանալու փայտը՝ դրա բռնակի հատվածով հարվածներ է հասցրել Հայկուշ Ս.-ի մեջքին և ոտքերին: Այնուհետև Հայկուշ Ս.-ի նկատմամբ ուժ գործադրելով՝ վերջինիս տարել և պառկեցրել է հյուրասենյակի բազմոցին և դուրս է եկել տնից՝ փակելով մուտքի դուռն ու Հայկուշ Ս.-ին տանը թողնելով միայնակ: Լուսադեմին վերադառնալով տուն՝ տեսել է Հայկուշ Ս.-ին բերանքսիվայր գետնին ընկած. նա կենդանության նշաններ ցույց չի տվել:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության եզրակացության՝ Հայկուշ Ս.-ի ստացած վնասվածքները մահվան պատճառի հետ գտնվում են ուղղակի պատճառական կապի մեջ. Հայկուշ Ս.-ի մահը պայմանավորված է սուր թոքային անբավարարությամբ, որն էլ պայմանավորված է դատաբժշկական փորձաքննությամբ հայտնաբերված գլխի, նստատեղի, ձախ ստորին վերջույթների սալջարդ վերքերով, դեմքի, պարանոցի, կրծքավանդակի, գոտկատեղի, վերին և ստորին վերջույթների շրջանների տարածուն

քերծվածքներով և արյունազեղումներով՝ ենթամաշկային ճարպաբջջանքի ընդգրկումով, աջից 11-րդ կողոսկրի և աջ արմունկոսկրի կոտրվածքներով, շրջակա հյուսվածքների տարածուն արյունազեղումներով, որոնք նպաստել են թոքերի մանր ու միջին մեծության անոթներում ճարպային էմբոլիայի զարգացմանը՝ թոքերի մանր արյունազեղման ու ներծծման օջախներով, արտահայտված այտուցով և էմֆիզեմայով, դիստելեկտազի օջախներով, բրոնխոսպազմով, հենքի հաստացումով բորբոքային տարրերի ինֆիկտացիայով, թոքի հեմոսիդերեզով:

Ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Հովհաննես Չ.-ն հոգեկան հիվանդություն չունի, հանցագործությունը կատարելիս վերջինս չի գտնվել նաև հոգեկան գործունեության որևէ ժամանակավոր հիվանդագին խանգարված վիճակում, որը կարող էր զրկել նրան գիտակցել իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել դրանք: Հովհաննես Չ.-ն հանցագործությունը կատարելիս կարող էր գիտակցել իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել դրանք, ուստի իրեն մեղսագրվող արարքի մեջ վերջինս ճանաչվել է մեղսունակ:

Դատարանի եզրահանգումը

Գործով ներկայացված այլ ապացույցները կիրառելով դատավճռում արձանագրված փաստական տվյալների նկատմամբ՝ դատարանը ամբաստանյալ Հովհաննես Չ.-ի քրեական պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ է դիտել սպանության դրվագով անկեղծորեն զղջալը, խոստովանական ցուցմունք տալը, սպանության դեպքի բացահայտմանն աջակցելը, իսկ քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է համարել արարքն ալկոհոլի ազդեցության, ինչպես նաև անօգնական և իրենից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը:

Հետազոտելով գործով ներկայացված ապացույցներն ու դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից դատարանը հանգել է այն եզրակացության, որ Հովհաննես Չ.-ի կատարած արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին, և նրա նկատմամբ նշանակել է պատիժ՝ ազատազրկում 10 տարի ժամկետով:

2) ԴԵՌԵՎՍ ՉԱՎԱՐՏՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

Կարինե Մ.[47]

Կարինե Մ.-ին սպանել է դստեր նախկին ամուսինը:

Գործի դատավարական նախապատմությունը

2016 թ. հուլիսի 8-ին Թագուհի Մ.-ի նախկին ամուսին Վլադիկ Մ.-ն կյանքից զրկելու դիտավորությամբ իր հետ նախապես վերցրած կացնով դարանակալել է Թագուհի և Կարինե Մ.-ների շենքի շքամուտքում և անսպասելիորեն հետևի կողմից հարձակվել է վերջիններիս վրա, նախ կացնով բազմաթիվ հարվածներ հասցրել Թագուհի Մ.-ի մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր վնաս, ապա նույն կացնով բազմաթիվ հարվածներ է հասցրել շքամուտքից դեպի 2-րդ հարկ տանող աստիճաններին կանգնած Կարինե Մ.-ի գլխին և մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներ՝ կյանքից զրկելով նրան:

Թեպետ տարիներ շարունակ Թագուհի Մ.-ն ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական բռնության Վլադիկ Մ.-ի կողմից, այնուամենայնիվ, ոստիկանությունն ու դատական մարմինները չեն պաշտպանել Թագուհի Մ.-ին և նրա ծնողներին Վլադիկ Մ.-ի բռնությունից և հետամտումից: Տարբեր առիթներով Թագուհի Մ.-ն ու նրա ծնողները ոստիկանությանը տեղեկացրել են ծեծի և բռնության այլ դեպքերի մասին: Դեպքերից մեկից հետո՝ 2016 թ. հունվարին, քրեական գործ է հարուցվել, և Վլադիկ Մ.-ն դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով՝ ուժեղ ֆիզիկական ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք պատճառելու համար, որի համար պետք է ազատազրկվեր 6 ամիս ժամկետով: Այնուամենայնիվ, չնայած բռնության երկարատև դեպքերին և Թագուհի Մ.-ի կյանքին ու առողջությանը սպառնացող անխուսափելի վտանգին՝ Երևան քաղաքի Շենգավիթի շրջանի առաջին ատյանի դատարանը որոշել է ազատազրկումը չկիրառել որպես պատժի տեսակ և կատարողի նկատմամբ նշանակել է պայմանական պատիժ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն: Արդյունքում Վլադիկ Մ.-ն գտնվել է ազատության մեջ և շարունակել Թագուհի Մ.-ի և նրա ծնողների նկատմամբ հետամտումն ու ոտնձգությունները:

Կատարված հանցագործության վերաբերյալ այլ տեղեկատվություն հասանելի չէ, և նշված գործով դատական քննությունը դեռևս ավարտված չէ:

---

47. Տե՛ս դատական գործ № ԵՇԴ/0192/01/16

Անանուն զոհ[48]

Այս կնոջը սպանել է ամուսինը:

Գործի դատավարական նախապատմությունը.

2016 թ. սեպտեմբերի 5-ին ժամը 12:30-ի սահմաններում Հակոբ Կ.-ն ալկոհոլ չարաշահելու շուրջ ծագած վիճաբանության ընթացքում հարվածներ է հասցրել իր կնոջ մարմնի տարբեր մասերին՝ առողջությանը պատճառելով թեթև հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ, իսկ երեք օր անց՝ 2016 թ. սեպտեմբերի 8-ից մինչև սեպտեմբերի 9-ը ժամը 03:00-ն ընկած ժամանակահատվածում, ձեռքերով և ոտքերով բազմաթիվ հարվածներ է հասցրել կնոջ մարմնի տարբեր հատվածներին՝ հասցնելով մահվան պատճառի հետ անմիջական կապի մեջ չգտնվող ծանր մարմնական վնասվածքներ, ապա նրան կյանքից զրկելու դիտավորությամբ՝ արտաքին շնչառական ուղիներն օտար մարմնով փակելու եղանակով սպանել է նրան, այնուհետև զանգահարել շտապօգնություն:

Դեպքի վերաբերյալ այլ տեղեկատվություն հասանելի չէ, և նշված գործով դատական քննությունը դեռևս ավարտված չէ:

Սյուզաննա Գ.[49]

Սյուզաննա Գ.-ին սպանել է ամուսինը:

Գործի դատավարական նախապատմությունը

Կասկածելով ամուսնական անհավատարմության մեջ՝ խանդի հողի վրա Սյուզաննա Գ.-ին կյանքից զրկելու դիտավորությամբ Բախշի Մ.-ն 2017 թ. ապրիլի 12-ին՝ ժամը 18:00-ի սահմաններում, դարանակալել և սպասել է կնոջն ու աննկատ հետապնդել է նրան և իր մոտ պահվող KH 32904 գործարանային համարի մեկ փողանի կարճեցված փողով հրացանից մեկ անգամ կրակել է Սյուզաննա Գ.-ի ծոծրակին՝ վերջինիս պատճառելով գլխի հրազենային կոտորակային կույր վիրավորում, ինչի հետևանքով առաջացած գլխուղեղի կարևորագույն կենսական ֆունկցիաների սուր խանգարման պատճառով Սյուզաննա Գ.-ն տեղում մահացել է:

Կատարված հանցագործության վերաբերյալ այլ տեղեկատվություն հասանելի չէ, և նշված գործով դատական քննությունը դեռևս ավարտված չէ:

---

48. Տե՛ս դատական գործ № ԼԴ1/0028/01/17

49. Տե՛ս դատական գործ № ԱՐԴ1/0049/01/17

3) ԱՆՄԵՂՍՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

Նինել Ս.[50]

Նինել Ս.-ին սպանել է ամուսինը:

Գործի դատավարական նախապատմությունը

2017 թ. մայիսի 7-ին՝ ժամը 03:00-ի սահմաններում, Կամո Ս.-ն կյանքից զրկելու դիտավորությամբ ավտոմեքենայի ընթացամասերի վերանորոգման համար նախատեսված բանալիով բազմաթիվ հարվածներ է հասցրել կնոջ՝ Նինել Ս.-ի գլխի տարբեր հատվածներին, ինչի հետևանքով Նինել Ս.-ն ստացած մարմնական վնասվածքներից տեղում մահացել է:

Կատարված հանցագործության համար Կամո Ս.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով: Նախաքննության ընթացքում առաջադրված մեղադրանքում Կամո Ս.-ն իրեն մեղավոր է ճանաչել:

Կամո Ս.-ին մեղսագրված հանցանքը, նրա խոստովանական ցուցմունքից բացի, հաստատվել է նաև քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված և դատաքննությամբ հետազոտված ապացույցներով:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Նինել և Կամո Ս.-ների որդին իր տված ցուցմունքում նշել է, որ Կամո Ս.-ն դեռևս 2014 թ. ապրում է հոգեկան հիվանդությամբ *«…և խանդի պատճառով միշտ անհարկի վիճաբանել է Նինել Ս.-ի հետ, հաճախակի ծեծել նրան»:* Դեպքի օրը Կամո Ս.-ն իր բջջային հեռախոսահամարով զանգահարել է որդուն և ասել. *«Ես իմ արածն արեցի»,* սակայն չի պարզաբանել, թե ինչ է արել: Միաժամանակ Կամո Ս.-ն հայտնել է, որ ցանկացել է հրկիզել նաև բնակարանը, սակայն *«խղճացել է հարսին»,* որը նույնպես այդ ժամանակ գտնվել է բնակարանում:

Գործով ստացված դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Նինել Ս.-ի մահը վրա է հասել կյանքի հետ անհամատեղելի մարմնական վնասվածքներից՝ բաց, բութ գանգուղեղային վնասվածք ստանալու հետևանքով, որոնք էլ գտնվում են ուղղակի պատճառական կապի մեջ մահվան հետ:

---

50. Տե՛ս դատական գործ № ԳԴ1/0023/01/17

Համաձայն ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության՝ հանցագործությունը կատարելիս Կամո Ս.-ն գտնվել է հիվանդագին խանգարված վիճակում, արարքը կատարել է ցնորազառանցական ապրումների ազդեցության ներքո, որը զրկել է նրան իր գործողությունների վտանգավորությունը գիտակցելուց ու դրանք ղեկավարելուց, ուստի իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Կամո Ս.-ն ճանաչվել է անմեղսունակ:

Դատարանի եզրահանգումը.

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Կամո Ս.-ին պետք է ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից. նրա նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում:

Օֆիկ Խ.[51]

Օֆիկ Խ.-ին սպանել է որդին:

Գործի դատավարական նախապատմությունը

2016 թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 15:30-ի սահմաններում, Օֆիկ Խ.-ն սպանվել է իր որդու՝ Տիգրան Գ.-ի կողմից: Վերջինս, իրենց տանը վիճաբանելով մոր հետ, նրան կյանքից զրկելու դիտավորությամբ դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Օֆիկ Խ.-ի կենսական կարևոր նշանակություն ունեցող օրգաններին՝ կրծքավանդակի հետին կեսին, պարանոցի և ձախ թիկունքային շրջաններին. ստացած մարմնական վնասվածքներից Օֆիկ Խ.-ն տեղում մահացել է: Կատարված հանցագործության համար Տիգրան Գ.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Առաջադրված մեղադրանքում Տիգրան Գ.-ն իրեն մեղավոր է ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ իրենց առանձնատան խոհանոցում վերցրել է սեղանի վրա դրված փայտյա կոթով դանակն ու մորը մեղադրելով անբարոյականության մեջ, իր ձեռքում եղած դանակով մեկ անգամ հարվածել է աջ կողքին, սակայն դանակի բութ լինելու պատճառով չի կարողացել նրան

51. Տե՛ս դատական գործ № ԳԴ1/0058/01/16

վնասվածք պատճառել: Այդ պահին իր մայրը՝ Օֆիկ Խ.-ն, վազելով դուրս է եկել տնից դեպի փողոց՝ օգնություն խնդրելու, սակայն ինքը հետապնդելով բռնել է նրան: Այդ ժամանակ Օֆիկ Խ.-ին հաջողվել է նրա ձեռքից խլել դանակն ու նետել անհայտ ուղղությամբ, սակայն նա, գրկելով մորը, նրան տեղափոխել է իրենց տան հյուրասենյակ, մեջքի վրա պառկեցրել է հատակին ու վերցնելով պատից կախված դանակը՝ սկզբից մեկ անգամ հարվածել է նրա որովայնի շրջանին, այնուհետև մեկ անգամ՝ աջ կողքի շրջանին, որից հետո մորը շրջելով դեմքով դեպի հատակը՝ երկու անգամ նույն դանակով հարված է հասցրել նրա ձախ թիկունքի շրջաններին, այնուհետև դանակը մխրճել պարանոցի հետին մակերեսին մինչև վերջ. այն թողնելով պարանոցի մեջ՝ տանից դուրս է եկել, որից հետո փողոցում հանդիպել է իրենց հարևանին և հայտնել, որ սպանել է մորն ու վերջինիս հեռախոսով զանգահարել է շտապօգնություն և հայտնել կատարվածի մասին:

Գործով ներգրավված վկաներից մեկի ցուցմունքով՝ *«Տիգրան Գ.-ն վերջին երկու երեք տարիներին իրեն տարօրինակ է պահել, մոր նկատմամբ առանձնահատուկ թշնամական վերաբերմունք է ունեցել, անընդհատ ասել է, որ մայրը իր թշնամին է և թող աչքին չերևա»:* Համանման ցուցմունքներ են տվել նաև գործով որպես վկա ներգրավված այլ անձինք:

Իրականացված ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության համաձայն՝ հանցագործությունը կատարելիս Տիգրան Գ.-ն գտնվել է հիվանդագին խանգարված վիճակում, արարքը կատարել է ցնորազառանցական ապրումների ազդեցության ներքո, որը զրկել է նրան իր գործողությունների վտանգավորությունը գիտակցելուց ու դրանք ղեկավարելուց, ուստի իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Տիգրան Գ.-ն ճանաչվել է անմեղսունակ:

<u>Դատարանի եզրահանգումը</u>

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Տիգրան Գ.-ին պետք է ազատել քրեական պատասխանատվությունից և պատժից. նրա նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում:

Ամալյա Թ.[52]

Ամալյա Թ.-ին սպանել է ամուսինը:

Գործի դատավարական նախապատմությունը

2017 թ. հուլիսի 12-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, Խաչիկ Թ.-ն, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, նախկինում իրեն դավաճանելու կասկածանքով և կենցաղային հարցերի շուրջ առաջացած վիճաբանության ընթացքում մարմնական վնասվածքներ պատճառելու դիտավորությամբ բռունցքով հարվածներ է հասցրել կնոջ՝ Ամալյա Թ.-ի գլխի տարբեր հատվածներին՝ պատճառելով բաց բութ գանգուղեղային կոտրվածք, գլխուղեղի սալջարդ վնասվածքներ, որից հետո Ամալյա Թ.-ն տեղափոխվել է հիվանդանոց և գիտակցության չգալով՝ հաջորդ օրը մահացել է:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Դիակի դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Ամալյա Թ.-ի մահը վրա է հասել գլխուղեղի արյունազեղումներից և մեխանիկական շնչահեղձությունից, որոնք պայմանավորված են գանգուղեղային բաց բութ վնասվածքով և շնչառական ուղիների լուսանցքների փակումով՝ մատներով խեղդումով:

Ստացված դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության համաձայն՝ Խաչիկ Թ.-ի մոտ ախտորոշվել է «Գլխուղեղի արտերիոսկլերոզ՝ փսիխոտիկ խանգարումներով /խանդի զառացանք/» հոգեկան հիվանդություն, որը նրա մոտ զարգացել է աստիճանաբար և հիվանդության արտաքին դրսևորումներն արտահայտվել են վերջին 5 տարիների ընթացքում: Հանցագործությունը կատարելիս Խաչիկ Թ.-ն գտնվել է վերը նշված վիճակում, արարքը կատարել է ցնորազառանցական ապրումների ազդեցության ներքո, որը զրկել է նրան իր գործողությունները, գործողությունների վտանգավորությունը գիտակցելուց ու դրանք ղեկավարելուց, ուստի իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Խաչիկ Թ.-ն ճանաչվել է անմեղսունակ:

Դատարանի եզրահանգումը.

Դատարանը, հետազոտելով ներկայացված ապացույցներն ու դրանք գնահատելով վերաբերելիության, թույլատրելիության, իսկ ամբողջ ապացույցներն իրենց համակցությամբ՝ գործի լուծման համար բավարարության տեսանկյունից, հանգել է այն եզրակացության, որ Խաչիկ Թ.-ի կատարված

52. Տե՛ս դատական գործ № ԱՐԱԴ/0033/01/17

արարքը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի հատկանիշներին, և հաշվի առնելով, որ հանրորեն վտանգավոր արարքը վերջինս կատարել է անմեղսունակության վիճակում, իր հոգեկան վիճակով վտանգավոր է իր և այլ անձանց համար, ուստի ենթակա չէ քրեական պատասխանատվության և պատժի, այլ կարիք ունի հարկադրական բուժման:

Գրետա Ս.[53]

Գրետա Ս.-ին սպանել է որդին:

Գործի դատավարական նախապատմությունը

Գրետա և Հովհաննես Ս.-ները բնակվել են միասին: Գրետա Ս.-ն տեսողական և առողջական խնդիրներ է ունեցել, և նրան խնամել և կարիքները հոգացել են նրա ծանոթները, իսկ որդին՝ Հովհաննես Ս.-ն, մոր խնամքով չի զբաղվել, վերջիններիս միջև տարբեր կենցաղային հարցերի շուրջ հաճախակի վիճաբանություններ են առաջացել, որի ընթացքում Հովհաննես Ս.-ն ծեծել և սպառնացել է սպանել մորը:

Հովհաննես Ս.-ն մշտական աշխատանք չի ունեցել, իր կարիքները հոգալու համար հաճախակի Գրետա Ս.-ից գումար է պահանջել: Գրետա Ս.-ն, վախենալով որդու վարքագծից, իր ոսկյա զարդերը, խնայած գումարն ու փաստաթղթերը որդուց թաքցնելու համար տվել է իր ծանոթներից մեկին, իսկ կենցաղային հարցերում իրեն օգնելու և որդուց պաշտպանելու համար հաճախակի դիմել է իր մեկ այլ ծանոթի:

2017 թ. հունիսի 18-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, Հովհաննես Ս.-ի և Գրետա Ս.-ի միջև տեղի ունեցած հերթական վիճաբանության ընթացքում Հովհաննես Ս.-ն Գրետա Ս.-ին կյանքից զրկելու դիտավորությամբ, պղնձյա մեկուսիչով մալուխը փաթաթելով վերջինիս պարանոցի շրջանին և հանգույցով ձգելով, խեղդամահ է արել նրան:

Կատարված հանցագործության համար Հովհաննես Ս.-ին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով:

Դատաքննությամբ հետազոտված ապացույցները

Առաջադրված մեղադրանքում Հովհաննես Ս.-ն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ իր բնակարանում խեղդամահ արված

53. Տե՛ս դատական գործ № ԳԴ1/0042/01/17

կինն իր մայրը չէ, և ինքը չի սպանել իր մորը:

Գործով վկաներից մեկի ցուցմունքի համաձայն՝ Հովհաննես Ս.-ն միշտ ճնշել է մորը, ցանկացել, որ Գրետա Ս.-ն շուտ մահանա, որ տունը վաճառի, միշտ գումար է պահանջել նրանից, հաճախակի սպառնացել է նրան, որ կսպանի, կխեղդի:

Գրետա Ս.-ն բազմիցս դիմել է ոստիկանություն, սակայն հետագայում իր բողոքը հետ է վերցրել: Համանման ցուցմունքներ են տվել նաև գործով ներգրավված մնացած վկաները:

Համաձայն ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննության եզրակացության՝ հանցագործությունը կատարելիս Հովհաննես Ս.-ն գտնվել է հիվանդագին խանգարված վիճակում, արարքը կատարել է ցնորազառանցական ապրումների ազդեցության ներքո, որը զրկել է նրան գիտակցել իր գործողությունների վտանգավորությունն ու ղեկավարել դրանք, ուստի իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Հովհաննես Ս.-ն ճանաչվել է անմեղսունակ:

Դատարանի եզրահանգումը

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ դատարանը հանգել է այն եզրակացության, որ Հովհաննես Ս.-ին պետք է ազատել քրեական պատասխանատվությունից ու պատժից և նրա նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հոգեբուժական հիվանդանոցի հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում իրականացված եզրակացությունը ներկայացվում է 2 ենթավերնագրերի ներքո:

1) Քանակական հետազոտության արդյունքում բացահայտված տվյալներ

2) Որակական հետազոտության արդյունքում բացահայտված տվյալներ

1) ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐ

ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՄԱՀՎԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԾԵԾ	2 ԴԵՊՔ
ԾԵԾ ԲՈՒԹ ԱՌԱՐԿԱՅՈՎ	2 ԴԵՊՔ
ԽԵՂԴԱՄԱՀ ԱՆԵԼ	4 ԴԵՊՔ
ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ	2 ԴԵՊՔ
ԿԱՑՆԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ	1 ԴԵՊՔ
ՀՐԱԶԵՆԱՅԻՆ ԿՐԱԿՈՑ	1 ԴԵՊՔ
ԿՆԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԶՈՒԳՈՐԴՎԱԾ ԲՌՆԱԲԱՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ԴԻԱԿԻ ԱՅՐՄԱՄԲ	1 ԴԵՊՔ

ԲՌՆԱՐԱՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ



ԲՌՆԱՐԱՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶՈՀԻ ՀԵՏ



ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ

ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԱՏԱՎՃՌԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ԾԱՆՐԱՅՆՈՂ ԵՎ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ[54]

1 ԴԵՊՔ — ՉԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ

1 ԴԵՊՔ — ԱՅԼ ԾԱՆՐԱՅՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

2 ԴԵՊՔ — ՉԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԾԱՆՐԱՅՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ

4 ԴԵՊՔ — ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

3 ԴԵՊՔ — ԱԼԿՈՀՈԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԾԱՆՐԱՅՆՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ

54. Տվյալները ներկայացվում են՝ ըստ ավարտված քրեական գործերի:

2) ՈՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐ

Ընտանեկան բռնության դեմ պայքարի արդյունավետ միջոցը դրա քրեականացումն է, ինչը կարող է իրականացվել ինչպես առանձին հանցակազմի նախատեսմամբ, այնպես էլ օրենսդրությամբ ընդհանուր հանցակազմերով գործերը քննելիս՝ տուժողի և բռնություն գործադրած անձի միջև ընտանեկան կապը որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 104, 105, 109-113, 117-119, 123-124, 131-134, 137-142 հոդվածները[55] նախատեսում են հանցակազմեր, որոնք պրակտիկայում առնչվում են ընտանեկան բռնությանը, սակայն չեն սահմանազատում ընտանեկան բռնության գործերն այլ քրեական գործերից և չեն սահմանում ընտանեկան բռնության տարրեր պարունակող գործերի որակման կամ պատժի նշանակմանն առնչվող որևէ առանձնահատկություն:

Դատական պրակտիկան ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության գործեր քննելիս դատարանները շատ հաճախ հաշվի չեն առնում.

- հանցագործության նախապատմությունը.
- ամբաստանյալի գործած հանցանքի շարժառիթը.
- հասարակության համար վտանգավորության աստիճանը:

Հակառակը, դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության և կնասպանության գործերի մեծ մասով դատարանները պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք դատաքննությամբ առհասարակ չեն հայտնաբերում, ինչպես օրինակ՝ Ռուզան Ջ.-ի և Նարինե Դ.-ի գործերում: Դատական ակտերի ուսումնասիրութ-

---

55. Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվածներ 104 (Սպանությունը), 105 (Հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը), 109 (Անզգուշությամբ մահ պատճառելը), 110 (Ինքնասպանության հասցնելը), 111 (Ինքնասպանության հակելը), 112 (Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 113 (Դիտավորությամբ առողջությանը միջին վնաս պատճառելը), 117 (Դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), 118 (Ծեծը), 119 (Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 123 (Մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը), 124 (Վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը), 131 (Մարդուն առևանգելը), 132 (Մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը), 133 (Ազատությունից ապօրինի զրկելը), 134 (Հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը), 137 (Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 138 (Բռնաբարությունը), 139 (Սեքսուալ բնույթի բռնի գործողությունները), 140 (Սեռական հարաբերության կամ սեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը), 141 (Սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ), 142 (Անառակաբարո գործողությունները):

յունը նաև ցույց է տալիս, որ անգամ ակնհայտ բռնության գործադրման փաստը նկարագրելիս համապատասխան արարքը չի որակվում որպես կնոջ նկատմամբ բռնության գործադրում, փոխարենը դատական ակտում համապատասխան իրավիճակը նկարագրվում է՝ օգտագործելով առավել մեղմ «քաշքշուկ», «անպարկեշտ վարք» բառերը, ինչը կարող ենք տեսնել, օրինակ, Նարինե Դ.-ի գործում՝ վերջինիս նկատմամբ բռնության տեսարանները նկարագրելիս կամ Սուսաննա Գ.-ի գործում սեռական ոտնձգության և բռնաբարությանը նախորդող տեսարանները նկարագրելիս:

Առավել մեղմ, իսկ որոշ դեպքերում նույնիսկ «արդարացնող» պարզաբանումների հանդիպում ենք նաև այլ գործերում, ինչպես օրինակ՝ Հայկուշ Ս.-ի նկատմամբ բռնության գործադրումը «հիմնավորվում» է Հովհաննես Չ.-ի «նյարդերը տեղի են տվել» արտահայտությամբ:

Կատարված բռնությունների բնութագրման թերությունները փաստում են նաև այդ հանցագործությունների որակման թերությունների մասին: Քննարկված գործերով ակնհայտ բռնության, այդ թվում՝ սեռական բռնության դեպքերը քննարկելիս դատարաններն առհասարակ չեն անդրադարձել բռնությամբ զոհին տառապանք պատճառելու հանգամանքին և պատճառված տառապանքը չեն որակել որպես հանցագործությունը ծանրացնող հանգամանք պատասխանատվության և պատժի հարցերը քննարկելիս: Փոխարենը բռնության և կնասպանության դեպքերը նկարագրելիս սահմանափակվել են առավել մեղմ բնորոշումներով, իսկ որոշ դեպքերում էլ «հայտնաբերվել» են պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ:

Զեկույցի շրջանակներում ուսումնասիրված դատական ակտերը նաև փաստում են, որ ընտանեկան բռնության, ինչպես նաև կնասպանության գործեր քննելիս դատարանները որևէ կերպ չեն քննարկում գործով տուժողների նկատմամբ բռնության պարբերական լինելու հանգամանքը, մինչդեռ ներկայացված գործերով որպես վկա ներգրավված անձինք (տե՛ս, օրինակ՝ Նարինե Դ.-ի, Հայկուշ Ս.-ի, Կարինե Մ.-ի, Նինել Ս.-ի, Գրետա Ս.-ի դատական գործերը) մեծ մասամբ նշում են բռնարարի՝ բռնություն գործադրելու շարունակականության մասին:

Սուսաննա Գ.-ի դատական գործում բազմիցս նշվում է, որ Արսեն Մ.-ն պարբերաբար այցելել է նրան, սակայն ինչպես գործի նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում հստակ քայլեր չեն ձեռնարկվել պարզելու Սուսաննա Գ.-ի նկատմամբ շարունակական բռնության գործադրման փաստը, ինչը կարող էր դիտարկվել որպես ծանրացուցիչ հանգամանք Արսեն Մ.-ի պատասխանատվության և պատժի հարցը որոշելիս: Մինչդեռ նշված գործով դատարանը որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող միակ հանգամանք է դիտարկել հանցագործությունն ալկոհոլային հարբածության վիճակում կատարելը, ինչը զեկույցում ներկայացված գործերում (տե՛ս նաև Ալինա Մ.-ի, Հայկուշ Ս.-ի գործերը) ընդհանուր առմամբ դատարանի կողմից պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող միակ հանգամանքն է դիտարկվել (բացառությամբ Հայկուշ Ս.-ի դատական գործի, որտեղ դատարանը քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք է համարել արարքն ալկոհոլի ազդե-

ցության, ինչպես նաև անօգնական և իրենից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը):

Ընտանեկան բռնության գործադրման պարբերականության անտեսման, ինչպես նաև պետության կողմից կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունից և չարաշահումից պաշտպանելու պարտականության իրականացման ձախողման ակնհայտ օրինակներից է նաև Կարինե Մ.-ի գործը, երբ ոստիկանության անգործությունն ու դատարանի կողմից նշանակված ակնհայտորեն անհամաչափ պատասխանատվության միջոցը Վլադիկ Մ.-ի համար ստեղծել են անպատժելիության մթնոլորտ՝ նպաստելով նրա՝ այդ հանցագործության իրականացմանը:

Ակնհայտ ընտանեկան բռնության տարրեր պարունակող գործերով դատարանները որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք են դիտարկում, օրինակ, ամբաստանյալի մեղայականով ներկայանալը (տե՛ս Ալինա Մ.-ի գործով դատական ակտը) կամ վերջինիս երիտասարդ լինելու հանգամանքը (տե՛ս Ռուզաննա Ջ.-ի գործով դատական ակտը), անկեղծորեն զղջալը, խոստովանական ցուցմունք տալը կամ դեպքի բացահայտմանն աջակցելը (տե՛ս Հայկուշ Ս.-ի գործով դատական ակտը): Որոշ դեպքերում էլ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք է դիտարկվում ամբաստանյալի խնամքին մինչև 14 տարեկան երեխաների (տե՛ս Նարինե Դ.-ի գործով դատական ակտը) առկայությունն այն պարագայում, երբ նույն գործերով տուժողը փաստացի ընտանեկան բռնության է ենթարկվել այդ նույն անչափահաս երեխաների ներկայությամբ:

Դատական պրակտիկայի նման տրամաբանությունն ուղղակի հակասում է վերևում քննարկված ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած այն դիրքորոշմանը, որ *«…որպես մեղմացնող հաշվի առնվող հանգամանքները պետք է ողջամտորեն նվազեցրած լինեն անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը»,* մինչդեռ ընտանեկան բռնության դեպքերը որևէ կերպ չեն կարող համարվել որպես արարքի հանրային վտանգավորությունը նվազեցնող հանգամանք, և, հետևաբար, նման տարրեր պարունակող գործերի քննության ընթացքում դատարանները չպետք է վերոշարադրյալ հիմքերը դիտարկեն որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքներ:

Վերոշարադրյալ կարգավորումներն ու պրակտիկան ուղղակի հակասության մեջ են գտնվում նաև Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիայի (Ստամբուլի կոնվենցիա)[56] հետ, որը Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2018 թ. հունվարի 18-ին[57]:

---

56. Տե՛ս https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680462533

57. Տե՛ս https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210/signatures

Կոնվենցիայի 46-րդ հոդվածով մասնակից պետություններին կոչ է արվում ապահովել, որ կոնվենցիայի կարգավորման առարկա հանցագործությունների մասով դատավճիռ կայացնելիս հաշվի առնվեն որոշակի ծանրացնող հանգամանքներ.

- **ա)** հանցագործությունը կատարվել է նախկին կամ ներկայիս ամուսնու/կնոջ կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով, ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը չարաշահած անձի կողմից,
- **բ)** հանցագործությունը կամ համասեռ հանցագործությունները կատարվել են շարունակաբար,
- **գ)** հանցագործությունը կատարվել է որոշակի հանգամանքների բերումով խոցելի վիճակի մեջ հայտնված անձի նկատմամբ,
- **դ)** հանցագործությունը կատարվել է երեխայի նկատմամբ կամ երեխայի ներկայությամբ,
- **ե)** հանցագործությունը կատարվել է միասնաբար գործող երկու կամ ավելի անձանց կողմից,
- **զ)** հանցագործությունը հետևել է ծայրահեղ բռնության գործադրմանը կամ զուգորդվել նման բռնություն գործադրելով,
- **է)** հանցագործությունը կատարվել է զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով,
- **ը)** հանցագործությամբ տուժողին պատճառվել է ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնաս,
- **թ)** կատարողը նախկինում դատապարտվել է նմանատիպ բնույթի հանցագործություններ կատարելու համար:

Քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների կարգավորումները Ստամբուլի կոնվենցիայի կարգավորումների համատեքստում՝ կարող ենք փաստել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածը, որը նախատեսում է պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքները, որպես այդպիսիք չի նախատեսում.

- կնոջ կամ ամուսնու, զուգընկերների, ընտանիքի այլ անդամների կամ համատեղ բնակվողների նկատմամբ կատարված հանցագործությունները (Ստամբուլի կոնվենցիայի 46 (ա) հոդված),
- երեխայի ներկայությամբ կատարված հանցագործությունները (Ստամբուլի կոնվենցիայի 46 (դ) հոդված),

- զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով կատարված հանցագործությունները (Ստամբուլի կոնվենցիայի 46 (Է) հոդված):

ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված մյուս բոլոր ծանրացնող հանգամանքները համապատասխանում են Ստամբուլի կոնվենցիայի պահանջներին:

Իրավաբանական գրականության մեջ անդրադառնալով ընտանեկան բռնության գործերով ծանրացնող հանգամանքների ամրագրման անհրաժեշտությանը՝ հաճախ է նշվում, որ դա կարելի է հիմնավորել նաև այն հանգամանքով, որ *«նույն հանցագործությունը զուգընկեր չհանդիսացող այլ անձանց կողմից կատարելը տուժողին ավելի քիչ տառապանք է պատճառում»*[58]*:*

Ընտանեկան բռնությունն առանձին հանցակազմով քրեականացնելու անհրաժեշտության վերաբերյալ կարելի է ներկայացնել նաև այլ փաստարկներ: Առանձին հանցակազմերի տեսքով սահմանումն առավել հստակեցնում է այն հանգամանքը, որ ընտանեկան բռնությունը հանցագործություն է և չի հանդուրժվելու հասարակության կողմից: Այս հարցի՝ օրենսդրական դաշտում ամրագրումը ևս մի կարևոր միջոց է ժխտելու այն գաղափարը, որ բռնությունը մասնավոր կամ ընտանեկան հարց է:

Հարկ է նկատել, որ Եվրոպական միության 10 անդամ պետություններն իրենց օրենսդրությամբ ընտանեկան բռնությունն առանձին հանցակազմով ամրագրել են որպես քրեորեն պատժելի արարք[59]: Օրինակ՝ Իսպանիայի քրեական օրենսգրքով[60] քրեական պատասխանատվություն է սահմանվում այն անձի նկատմամբ *«…ով պարբերաբար ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն է կիրառում այն անձի դեմ, որը նրա ամուսնական զուգընկերն է կամ եղել է նրա ամուսնական զուգընկերը կամ որը կապված է կամ կապված է եղել նրա հետ հուզական կապով, նույնիսկ եթե չի բնակվում և չի բնակվել վերջինիս հետ համատեղ…»:* Նշված հանցակազմի կարգավորման շրջանակն իրականում բավականին լայն է և ներառում է նաև նույն արարքները, որոնք կատարվել են բարեկամների նկատմամբ:

---

58. Տե՛ս Հեգեմանն-Ուայթ, «Եվրոպայի խորհրդի՝ անդամ պետություններին ուղղված «Կանանց նկատմամբ բռնության պաշտպանության մասին» № (2002) 5 հանձնարարականի իրականացման 4-րդ փուլի մշտադիտարկման արդյունքների վերլուծական ուսումնասիրություն», Եվրոպայի խորհուրդ, 2004 թ.:

59. Տե՛ս «Իրագործելիության ուսումնասիրություն՝ կանանց, երեխաների, սեռական կողմնորոշման դեմ բռնության վերաբերյալ ազգային օրենսդրությունը ստանդարտացնելու հնարավորությունների և կարիքների մասին», Եվրոպական հանձնաժողով, 2010 թ.: http://www.europarl.europa.eu/eplive/expert/multimedia/20110405MLT17038/media_20110405MLT17038.pdf

60.Տե՛ս հոդված 173, https://www.legislationline.org/download/action/download/id/6443/file/Spain_CC_am2013_en.pdf

Հարկ է նկատել նաև, որ պետության օրենսդրությամբ ընտանեկան բռնության քրեականացումը ոչ միայն երաշխավորում է անհատի իրավունքների պաշտպանությունը, այլև կարևոր երաշխիք է համարվում պետության պատասխանատվության հարցը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով հաստատված որոշումների համատեքստում քննելիս: «Երեմիան և այլք ընդդեմ Մոլդովայի» գործով[61] Եվրոպական դատարանը նշել է, որ «*…Մոլդովայի օրենսդրությունը հատուկ քրեական պատիժ է սահմանել ընտանիքի անդամների նկատմամբ իրականացվող բռնության դեպքերի համար»* և արդյունքում եզրակացրել է, որ այդ կերպ *«…պետական մարմիններն ապահովել են օրենսդրական կառուցակարգեր, որոնք թույլ են տալիս միջոցներ կիրառել ընտանեկան բռնության համար մեղադրվող անձանց նկատմամբ»:*

Անհրաժեշտ է միաժամանակ ընդգծել, որ ընտանեկան բռնության դեպքերին արդյունավետ արձագանքելու գործընթացում խնդրահարույց է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված՝ պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանքը, այն է՝ տուժողի վարքագծի հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը:

Հարկ է նկատել, որ սույն զեկույցում քննարկված կնասպանության դեպքերում կանանց մեծ մասամբ կասկածել են անհավատարմության կամ անբարոյականության մեջ (տե՛ս Ռուզաննա Ջ.-ի, Նարինե Դ.-ի, Սյուզաննա Գ.-ի, Օֆիկ Խ.-ի, Ամալյա Թ.-ի, Նինել Ս.-ի, Ալինա Մ.-ի գործերով դատական ակտերը):

Ընտանեկան բռնության գործերով նման մեղմացնող հանգամանք նախատեսելն առնվազն հակասություն է առաջացնում Ստամբուլի կոնվենցիայի կարգավորումների հետ, որի 42-րդ հոդվածով ներառվում է հստակ արգելք կանանց նկատմամբ բռնության, այդ թվում՝ ընտանեկան բռնության, պատմականորեն օգտագործված արդարացումների վերաբերյալ:

Կոնվենցիայով սահմանվում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն միջոցներ՝ ապահովելու, որ մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ, այսպես կոչված, «պատիվը» չդիտվեն որպես կոնվենցիայում նշված որևէ հանցագործության արդարացում:

Ասվածից հետևում է, որ մասնակից պետությունները պարտավոր են ապահովել, որպեսզի մեղադրյալի՝ իր արարքն արդարացնող որևէ հիմնավորում առ այն, որ գործողությունը կատարվել է կանխելու կամ պատժելու տուժողի՝ մշակութային, կրոնական, սոցիալական կամ ավանդական նորմե-

61. Տե՛ս «Երեմիան և այլք ընդդեմ Մոլդովայի» 2013 թ. մայիսի 28-ի գործով ՄԻԵԴ վճիռ, գանգատ № 3564/11, https://rm.coe.int/16805a32af

րի, կամ պատշաճ վարքագծի, սովորույթների ենթադրվող, ընկալվող կամ փաստացի խախտումները, չդիտվի որպես քրեորեն պատժելի արարքի արդարացում:

Անհրաժեշտ է նկատել, որ նման իրավանորմի առկայությունն առավել խնդրահարույց է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ կինը հայկական հայրիշխանական համակարգում դիտվում է իբրև սեփականություն արական իշխանության դրսևորման ու հաստատման: Կնոջ ստորադաս լինելու համոզմունքի գերակայությունը թույլատրելի է դարձնում համանման հանցագործությունների կատարումն ու արդարացումներ փնտրում՝ դրանք որակելով իբրև կնոջ վարքի հակաբարոյականությամբ պայմանավորված գործողություններ:

Կրկին անդրադառնալով ՀՀ քրեական օրենսգրքի կարգավորումներին՝ պետք է նշել, որ օրենսգիրքը չի ներառում հատուկ դրույթներ կանանց նկատմամբ բռնությունների վերաբերյալ: Ավելին, օրենսգրքով մարդու իրավունքների խախտման այս ձևի՝ անձի սեռով պայմանավորված բնույթը կամ հատուկ դինամիկան հաշվի առնելու որևէ կոնկրետ մեխանիզմ առկա չէ: Օրենսգրքով կանանց նկատմամբ բռնությունը կամ ընտանեկան բռնությունը որևէ կերպ սահմանված չէ, և նախատեսված չեն նաև տուժողի սեռը կամ տուժողի և հանցանք կատարած անձի միջև հարաբերությունները հաշվի առնող դրույթներ:

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, բռնությունից տուժածների պաշտպանության և հանցանք կատարած անձանց նկատմամբ քրեական հետապնդման համար արդյունավետ օրենսդրական կառուցակարգերի ապահովման նպատակով անհրաժեշտ է քրեական օրենսդրությամբ համապարփակ կարգավորումներ նախատեսել անձի՝ սեռի հիմքով բռնության բոլոր ձևերին՝ հատուկ ուշադրություն դարձնելով ընտանեկան բռնության դեպքերին:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման, ինչպես նաև ընտանեկան բռնության և կնասպանության հանցագործությունները կանխարգելելու և անպատժելիության մթնոլորտը վերացնելու համար Հայաստանի Հանրապետությունը պետք է ընդունի անհրաժեշտ, արդյունավետ օրենսդրական կառուցակարգեր և ապահովի դրանց պատճաշ գործունեության իրականացումը:

1) Հայաստանի Հանրապետությունը պետք է վավերացնի Եվրոպայի խորհրդի «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա):

2) Ստամբուլի կոնվենցիայի վավերացմամբ անհրաժեշտ է փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ այն համապատասխանեցնելով կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ միջազգային չափանիշներին:

3) Մինչ Ստամբուլի կոնվենցիայի վավերացումն անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում: Մասնավորապես՝

- Առանձին հանցակազմով պետք է քրեականացվի ընտանեկան բռնությունը:
- ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանքների շարքում անհրաժեշտ է.

o լրացնել ընտանեկան բռնության գործադրումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,

o լրացնել անձի սեռի հիմքով բռնության բոլոր ձևերի իրականացումը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,

o լրացնել կնոջ/ամուսնու, զուգընկերների, ընտանիքի այլ անդամների կամ համատեղ բնակվող անձանց նկատմամբ կատարված հանցագործությունները՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,

o լրացնել երեխայի ներկայությամբ կատարված հանցագործությունները՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք,

o լրացնել զենքի գործադրմամբ կամ դրա գործադրման սպառնալիքով կատարված հանցագործությունները՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք:

● Ուժը կորցրած պետք է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7)-րդ կետով նախատեսված տուժողի վարքագծի հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը՝ որպես պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող հանգամանք:

Քրեական օրենսդրության փոփոխություններից զատ՝ անհրաժեշտ է.

4) Պարբերաբար և պարտադիր կազմակերպել համապատասխան մասնագետների (դատավորներ, դատախազներ, քննիչներ և այլն) համար դասընթացներ՝ կնասպանության, ընտանեկան բռնության կապակցությամբ առկա միջազգային չափանիշների վերաբերյալ՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ առկա կարծրատիպերի վերացմանը:

5) Պարբերաբար մշակել և իրականացնել ծրագրեր՝ ուղղված ընտանեկան բռնության կանխարգելմանն ու հասարակության իրազեկվածության բարձրացմանը:

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Գենդեր

Տարբեր սեռի անձանց սոցիալապես ամրագրված վարք, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական պատկերացում (հայեցակետ), որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ ներառյալ քաղաքականությունը, տնտեսությունը, առողջապահությունը, գիտությունը, իրավունքը, մշակույթն ու կրթությունը:

Գենդերային խտրականություն

Գենդերային նախապաշարմունքների, կարծրատիպերի, սեռի հատկանիշով անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

Գենդերային ուղղակի խտրականություն

Սեռային պատկանելիությունն ուղղակիորեն մատնանշող խտրականություն:

Գենդերային անուղղակի խտրականություն

Խտրականություն՝ առանց սեռային պատկանելիության ուղղակի մատնանշման:

Գենդերային հավասարություն

Ենթադրում է հավասար վերաբերմունքի և սեռով պայմանավորված խտրականությունից զերծ պայմանների և հնարավորությունների առկայություն հասարակությունում:

Գենդերային բռնություն

Բռնություն, որն առաջանում է գենդերային դերերից բխող ակնկալիքների

և համապատասխան հարաբերություններում ուժի անհավասար բաշխման հետևանքով:

Ընտանեկան բռնություն

Ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական բռնության բոլոր դրսևորումներն ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ նախկին կամ ներկայիս ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ նրանից, թե կատարողը բնակվում կամ բնակվել է տուժողի հետ նույն բնակարանում, թե ոչ:

Կնատյացություն

Կանանց և աղջիկների՝ որպես առանձին խմբի հանդեպ համակարգային ատելությունը, արհամարհանքը և նախապաշարումները:

Կնասպանություն (ֆեմիցիդ)

Կանանց և աղջիկների սպանություն՝ նրանց գենդերային պատկանելության հիմքով, որը պայմանավորված է գենդերային անհավասարության և նրանց կյանքի և մարմնի վրա հայրիշխանական համակարգի կողմից ուժի և իշխանության հաստատման հանգամանքներով:

Հայրիշխանություն

Հասարակական կազմավորման ձև, որտեղ տղամարդն է հանդիսանում քաղաքական իշխանության հիմնական կրողն ու բարոյական հեղինակությունը: Հայրիշխանությանը բնորոշ է տղամարդկային իշխանության ինստիտուտի և տղամարդկային արտոնությունների առկայությունը, միաժամանակ կանանց ենթակայությունն ու ենթակա կարգավիճակը: Տղամարդն է իրականացնում սեփականության վերահսկողությունը, իսկ հայրերն ընտանիքում իշխանություն ունեն կանանց և երեխաների հանդեպ:

Հոմոֆոբիա

Երկյուղ, վախ, ատելություն, զզվանք նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող անձանց և նույնասեռականության նկատմամբ: Հոմոֆոբիայի հիմքում բացասական կարծրատիպերն ու նախապաշարմունքներն են:

Սեքսիզմ

Սեռի հատկանիշով կամ գենդերային խտրականության դրսևորում: Կանխակալ մտածողություն և վերաբերմունք, հիմնականում կանանց նկատմամբ, որով անհիմն ձևով վերագրում կամ մերժում են անձի կոնկրետ որակներ: Այն ունի համակարգային բնույթ և ծառայում է հայրիշխանական համակարգի պահպանմանը:

Ֆեմինիզմ

Քաղաքական շարժում, գաղափարախոսություն և սոցիալական շարժում, որի առանցքային նպատակներից է կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարության ապահովումն ու կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացումը հասարակության մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավական փաստաթղթեր.

1. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք:

http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=118672

2. Իսպանիայի քրեական օրենսգիրք:

3. «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Ստամբուլի կոնվենցիա):

4. «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք:

5. ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 23-ի «Մինչդատական վարույթը բնութագրող ցուցանիշների վիճակագրական հաշվետվությունների միասնական ձևերը և դրանց լրացման ու ներկայացման կարգերը հաստատելու մասին» № 1225-Ն որոշում:

6. ՀՀ կառավարության 2015 թ. մարտի 19-ի «Դատական գործերի դասակարգումը, դատական վիճակագրության՝ պարտադիր հրապարակման ենթակա վիճակագրական տվյալների (տեղեկությունների) ցանկը և հրապարակման կարգը, վիճակագրական հաշվետվությունների բովանդակության նկարագրությունը սահմանելու մասին» № 306-Ն որոշում:

7. ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թ. հունիսի 1-ի Պարույր Բայրամյանի վերաբերյալ № ՎԲ-84/07 գործով որոշում:

8. ՀՀ քրեական օրենսգիրք:

9. ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6)

10. Կնասպանության մասին Վիեննայի հռչակագիր:

http://www.dianarussell.com/vienna-declaration-.html

Vienna Declaration on Femicide.

11. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Օփուզն ընդդեմ Թուրքիայի դատական գործ:

https://hudoc.echr.coe.int/app/conversion/pdf/?library=ECHR&id=001-92945&filename=001-92945.pdf

European Court of Human Rights, Case of Opuz v Turkey.

12. Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Կոնտրովան ընդեմ Սլովակիայի դատական գործ:

https://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/resources/Kontrova%20v.%20Slovakia_en.asp

European Court of Human Rights, Case of Kontrova v Slovakia.

13. Կանանց և աղջիկների գենդերային հիմքով սպանությունների դեմ գործողությունների իրականացման մասին բանաձև, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա, 2014:

https://www.unodc.org/documents/commissions/CCPCJ/Crime_Resolutions/2010-2019/2013/General_Assembly/A-RES-68-191.pdf

Resolution on Taking action against gender-related killing of women and girls, UN General Assembly, 2014.

Գրքեր, բառարաններ և ուսումնասիրություններ/հետազոտություններ.

14. «Հավասարության լեզու» տերմինաբանական բառարան, «Խտրականության դեմ պայքարի և հանուն հավասարության» կոալիցիա, Երևան, 2016:

15. Ջիլոզյան Ա., Կնասպանությունը Հայաստանում. Լուռ համաճարակ: Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա, 2016:

16. Օսիպով Վ. և Սարգիզովա Ջ., Տղամարդիկ և գենդերային հավասարության հիմնախնդիրները Հայաստանում, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, 2016:

17. 2016 թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում:

18. 2017 թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում:

19. Կապուտի Ջ., Ռասել Դ., Կնասպանություն. խոսելով անխոսելին, 1990;1(2):

Caputi J, Russell DEH. “Femicide: speaking the unspeakable”. Ms. 1990;1(2)

20. Դոբաշ Ռ. Ե., Դոբաշ Ռ. Փ., Երբ տղամարդիկ սպանում են կանանց, Օքսֆորդի համալսարանի հրատարակչություն, 2015:

Dobash R. E., Dobash R.P., “When men murder women”, Oxford university press, 2015.

21. Իրագործելիության ուսումնասիրություն՝ կանանց, երեխաների, սեռական կողմնորոշման դեմ բռնության վերաբերյալ ազգային օրենսդրությունը ստանդարտացնելու հնարավորությունների և կարիքների մասին, Եվրոպական հանձնաժողով, 2010:

“Feasibility Study to Assess the Possibilities, Opportunities and Needs to

Standardise National Legislation on Violence against Women, Violence against Children and Sexual Orientation Violence", European Commission, 2010.

22. Հեգեմանն-Ուայթ, Եվրոպայի խորհրդի՝ անդամ պետություններին ուղղված «Կանանց նկատմամբ բռնության պաշտպանության մասին» № (2002) 5 հանձնարարականի իրականացման 4-րդ փուլի մշտադիտարկման արդյունքների վերլուծական ուսումնասիրություն, Եվրոպայի խորհուրդ, 2004:

Hagemann-White C., "Analytical Study of the Results of the 4th Round of Monitoring the Implementation of Recommendation Rec(2002)5 on the Protection of Women against Violence in Council of Europe Member States", Council of Europe, 2014.

23. Վերաիմաստավորելով առանձին պատահարը. կնասպանության վիճակագրությունը 2009-2015 թթ., Women's Aid և NIA, 2016:

https://1q7dqy2unor827bqjls0c4rn-wpengine.netdna-ssl.com/wp-content/uploads/2017/01/The-Femicide-Census-Jan-2017.pdf

Redefining an Isolated Incident: Femicide Census 2009-2015, Women's Aid and NIA, 2016.

24. Ջիլ Ռեդֆորդ և Դայանա Ռասել, Կնասպանություն. կանանց սպանությունների քաղաքականությունը, Մակմիլան հրատարակչություն, 1992:

Jill Radford and Diana E. H. Russell, "Femicide: The Politics of Woman Killing",1992, Macmillan Publishing company.

25. Ռասել Դ. Ե. Հ., Հարմս Ռ. Ա. (խմբ.), «Կնասպանությունը գլոբալ հեռանկարում», Նյու Յորք, Teachers College Press; 2001:

Russell D.E.H., Harmes R.A., eds. "Femicide in Global Perspective". New York, Teachers College Press, 2001.

26. Ռասել Դ. Ե. Հ., ՁԻԱՀ-ը որպես զանգվածային կնասպանություն. Հարավային Աֆրիկան՝ կիզակետում, Կնասպանությունը գլոբալ հեռանկարում, Նյու Յորք, Teacher's College Press; 2001:

Russell DEH. AIDS as mass femicide: focus on South Africa. In: Russell DEH, Harmes RA, eds. Femicide in Global Perspective, 2001.

27. Քամփբել Ջ., Ռունյան Ք., Կնասպանություն. հրավիրյալ խմբագիրներ, Ներածություն, Սպանությունների ուսումնասիրություն ամսագիր, 1998;2(4)

Campbell J.C., Runyan C.W., Femicide: guest editors' introduction. Homicide Studies, 1998;2(4).

Առցանց հոդվածներ և զեկույցներ.

28. Կնասպանության տեսություններն ու դրանց նշանակությունը հասարակական հետազոտություններում, 2016:

https://www.violenceresearchinitiative.org/uploads/1/5/6/9/15692298/theories_femicide.pdf

“Theories of femicide and their significance for social research”, SAGE, 2016.

29. Կնասպանություն. գլոբալ խնդիր, որ գործել է պահանջում, 2013, ՄԱԿ-ի համակարգերի ակադեմիական խորհուրդ (ACUNS) Վիեննայի գրասենյակ:

http://www.genevadeclaration.org/fileadmin/docs/Co-publications/Femicide_A%20Gobal%20Issue%20that%20demands%20Action.pdf

“Femicide. A Global issue that demands action” ACUNS.

30. Սպանությունների գլոբալ մատյան, UNODC, 2013:

https://www.unodc.org/documents/data-and-analysis/statistics/GSH2013/2014_GLOBAL_HOMICIDE_BOOK_web.pdf

Global homicide book, UNODC.

31. Քերըն Սթաութ, Մտերիմների կնասպանություն. էկոլոգիական վերլուծություն, Սոցիոլոգիայի և սոցիալական բարեկեցության ամսագիր, համար 19, թողարկում 3, 1992 թ. սեպտեմբեր:

https://scholarworks.wmich.edu/cgi/viewcontent.cgi?referer=&httpsredir=1&article=2029&context=jssw

Karen Stout, “Intimate Femicide: An Ecological Analysis”, The Journal of Sociology & Social Welfare, Vol. 19, Issue 3 Sept. 1992.

Նյու Սաութ Վելսի 2015-2017 թթ. Ընտանեկան բռնության մահացության ուսումնասիրության թիմի տարեկան հաշվետվություն:
https://www.parliament.nsw.gov.au/lc/papers/DBAssets/tabledpaper/WebAttachments/72106/2015-2017_DVDRT%20REPORT%20PDF.pdf

NSW Domestic Violence Death Review Team Annual Report 2015-2017, P. 149, NSW Government.

32. Օփուզն ընդդեմ Թուրքիայի, Եվրոպայի շրջադարձային վճիռը կանանց նկատմամբ բռնության հարցում, Մարդու իրավունքների՝ սեղմագիր, համար 17, թողարկում 1. հոդված 5, 2009: Համառոտագիր՝

https://www.womenslinkworldwide.org/en/files/1153/opuz-v-turkey-europe-s-landmark-judgment-on-violence-against-women.pdf

Opuz v. Turkey: Europe ‘s Landmark Judgment on Violence against Women, Human Rights Brief, Vol. 17, Issue 1, Article 5, 2009.

33. Psytel. 2010. Estimation de la mortalité liée aux violences conjugales

en Europe: ‘IPV EU Mortality.’ DAPHNE Projet No. JLS/2007/DAP-1/140. Rapport scientifique. On-line available: http://www.psytel.eu/violences.php

34. Վերաիմաստավորելով առանձին պատահարը. կնասպանության վիճակագրությունը 2009-2015 թթ.:

https://1q7dqy2unor827bqjls0c4rn-wpengine.netdna-ssl.com/wp-content/uploads/2017/01/The-Femicide-Census-Jan-2017.pdf

Redefining an Isolated Incident: Femicide Census 2009-2015, Women’s Aid and NIA, 2016

35. Կնասպանության ընկալման ամրապնդում: Կիրառելով հետազոտությունը խթանելու գործողությունները և հաշվետվողականությունը:

https://path.azureedge.net/media/documents/GVR_femicide_rpt.pdf

Strengthening understanding of femicide. Using research to galvanize action and accountability.

36. Ըմբռնել ու լուծել կանանց նկատմամբ բռնության խնդիրը, ԱՀԿ, 2012:

http://apps.who.int/iris/bitstream/handle/10665/77421/O__12.38engpdf;jsessionid=7E6EFECBD717D4371CE9D0E3EA3B05A6?sequence=1

“Understanding and addressing violence against women”, WHO, 2012.

37. Կանանց նկատմամբ բռնություն, հիմնական փաստեր, ԱՀԿ, 2017:

http://www.who.int/news-room/fact-sheets/detail/violence-against-women

Violence against women. Key facts, WHO, 2017.